ԿՐԹԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԵԱՆ

ԱՌՆ

ՏՊԵԱԼ

ՅՕՐԹԱԳԻՒՂ

—

1829

ԿՐԹՈՒԹԻՒՆ
ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Յաւաքեալ՝ի Պատուելի Գրիգոր
Դպրէ փեշտիմալճեան։

Ի պէտս ուսման նորավարժ մանկանց,
և այլոց բազմաց հասարակութեան։

ՏՊԵՐԱՆ,

Յրամանաւ ամենապատիւ և
վեհափառ Պատրիարքի կոս-
տանդնուպօլսոյ Տէրն Կարա-
պետի Աղթ Աթոռի։

1829 ՅՕՐԹԱԳՐՈՒԴ ՀԱՄԿԸ

Ի Տպարանի Պօղոսի արտաքեան
ապուշեխցւոյ։

Մարմնոյ կրթութիւն առ սակաւ ինչ օգտակար է. իսկ ածպաշտութիւն առ ամ ինչ օգտակար է, և զաւետիս կենաց ունի զարդիս և զհանդերձ ձեւոյն։ ॥ ա. տիմ. դ. ը։

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՄԱՍԱԴԻՍԻՈՅ
4/1
8215

ՅԱՌԱՋԱԲԱՆ։

Լ՝մեծաբարին ամ մարդս ստեղծելու առեն՝ տրվաւ անոր անմահ հոգի , իմացական միտք , և ազատ կամք . ոչ զի իմացական մտաք՝ էարն ու բարին ճանչնայ , օգտակարը և վնասակարը որոշէ . և ազատ կամքը՝ էարէն և վնասակարէն հեռի կենայ , և բարին և օգտակարն ընէ . և անմահ հոգւոնն յաւիտեանս յաւիտենից ժառանգէ իր բարեգործութեան վարձքը , որ է երանաւէտ կեանքը և արքայութիւնը։

Լ՝երբ ամ նիւթական արարածները ստեղծեց , բոլորին համար ալ ամ ամաշունչին մէջը գրված է այս խօսքս . էաւ ամ չի էարէ էն . բայց երբ մարդուս ստեղծումը կը պատմէ , չէ գրված այս խօսքը , չի էարէ էն՝։

Ա՝ն զի ուրիշ ամմէն նիւթական արարածները՝ ամ այնին բարերարու

թէն ինչ կարդ և աղեցութիւն որ պատուրած ունին իրէնց բնութիւնմէջը, անով կը շարժին, և բնաւ չեն կրնար փոխել. և այն ածաստանման կարգովը բարի են։

Բայց որովհետև անձնիշխան է մարդս, աղեցուցէ բնութիւնը վերը, իր կամքը ինչ որ կուզէ՝ զայն կընէ, եթէ բարի և եթէ չար. ապա ինչպէս չարը գործելովը չար կըլլայ, այնպէս ալ բարին գործելովը բարի կըլլայ։

Այդ է որ՝ այլ ամէն նիւթական արարածները մարդոյս համար, իսկ մարդս ալ համար ստեղծաւ. ապա մարդս պիտի ջանայ և աշխատի բարի ըլլալ, և անով իր վախճանին հասնիլ։

Այ զի մեծ անարդանք է մարդոյս, որ պատկեր և նման՝ և վերայ ստեղծվեր է, և՝ որ և իշխան ամ արարածոց դրուվեր է, եթէ բարի

և առաքինի ըլլայ, անբան անասունի պէս կենցաղավարի, և իր վախճանին ըլլայ։

Բայց որովհետև գլխաւորը և դիւրին ճանապարհն և յարմար միջոց բարի և առաքինի ըլլալու, է քաղաքավարական կրթութիւնն. որ անով մարդս զինքը օրէնքի տակ կը ձգէ. և խօսքը և գործքը կը բարեկարգէ. և հետևապէս առաքինի և երջանիկ կըլլայ։ Ուստի բարոյական դրքերէն առաջ՝ պէտք է մարդուս 'ի տղայութենէ ժամանակին քաղաքավարութենէ դիրք կարդայ և սորվի, որ մեծութենէ առեանը առաքինի ըլլայ։

Ա՜ի վի ինչպէս նորատունկ ծառ մը՝ որ թէ անխնամ մնալով ծուռումուռ բուսանի, քանի որ մատղաշ և կակուղ է՝ քիչ մը դարմանով կըրնայ շտկըվիլ. բայց երբ աճի և պնդանայ, պարտիզպանին ամէն ջանքը և աշխատանքը դատարկ կը հանէ։

Այսպէս ալ մարդս քանի որ մանկական հասակի մէջէ, անոր պակասութիւնը սակաւ աշխատութիւնով կըրնայ ուղղել. բայց երբ զարգանայ և մեծնայ, էր պակասութիւնն ալ հետը կը մեծնայ, և ունակութիւն կըլլայ և կը հաստատի. և այնուհետև ամէն խրատ և կրթութիւն դրեթէ զուր և անօգուտ կըլլան. ինչպէս հասարակ կաց առածը կըսէ. օձը քանի ծերանայ՝ շապիկը կը փոխէ, բայց էր նութիւնը չը փոխեր։

Դա այսպէս անկիրթ և անխրատ մարդը՝ չար և վայրենի մեկ մը կըլլայ երկրի վրայ. մինչև խրատամբ կըրնայ կոչվիլ այնպիսին, ժանտախտ մարդկային ընկերութիւն. և անպէտ ան բեռն աշխարհի։

Վա՜յ զի անարդ փուշերը և բոյսերը, թունաւոր ջերմունքը և ճրճիքը, ահեղի դազանքը և թռչունքը, որը կենդանեաց կերակուր, որը

ախտից և ցաւոց դեղ, և որը կրթու-
թիւն պիտանի կըլլան մարդուս. իսկ
չար և կոշտ մարդը՝ իսպառ անարդ
է և անպէտ, և ատելի ամենուն. ինչ
պէս որ բարի և քաղաքավար մար-
դը՝ ամենուն պիտանի է և սիրելի։

Ուստի հիմա այս գրքոյկը՝ որ կո-
չի Կրթութիւն Քաղաքավարութիւն,
դպրատան մանկանց համար կամե-
ցանք յարմարել ռամկական ոճով՝
որ հեշտ հասկընան. և մէջը եղած
կանոնները՝ ի մանկութէ սորվին և
ունակութիւն ընեն. որ այնուհետև
իրենց բոլոր կեանքին մէջը՝ ի գործ
դնեն. և այսպէս բարի քաղաքավա-
րութիւն օր ըստ օրէ կատարեալ առա-
քինութիւն ստանան. և միշտ հանդիստ
և երջանիկ ըլլան՝ թէ այս աշխարհ-
քիս մէջը և թէ՝ ի հանդերձեալ
կեանքը։

Կրթեա՛ զքեզ՝ ո՛վ պատա՛ս դի,
Լինել բարի՝ քաղաքա՛ց։
Զի թէ չկցես՝ մարդաւա՛ր մի,
Կարես լինել՝ առաքի։

ԿՐԹՈՒԹԻՒՆ

ԴՐԱՊԱՏՐԱՍ ԱԲՈՒԹԵՆԱՆ

Աստային անհուն իմաստութիւնը, ամէն մեկ մարդ ոչ միակերպ՝ այլ տարբեր և աննման բնական խառնելվածովը, և գործարանաց կազմելվածովը ստեղծեց։ Ընդ հասարակ իւրաքանչիւր մարդու ուժը, քաջութիւնը, միտքը, բարքը, և այլ հոգւոյ և մարմնոյ կարողութիւնքը և գործողութիւնքը միակերպ չեն, այլ տարբեր և աննման են միմեանց։

Այս պատճառաւս է, որ ոմանք՝ի բնութիւն հանճարեղ՝ և ոմանք յիմար կը լլան. ոմանք ուժեղ՝ և ոմանք տկար. ոմանք խրոխտ և հրամանատու, և ոմանք հեզ և հրամանակատար. ոմանք ծառայական արհեստի հեռւոզ, և ոմանք ազատական. ոմանք հոգևորի փափաքող, և ոմանք մարմնականի. և այսպէս ամէն մեկը

զանազան բնաւորութիւն և բաղձանք ու նենալով զանազան վիճակի մէջ կը գտնուին. և միմեանց օգնականութիւնը կը կարօտին։ Ա՛ռ այսորիկ սկսան մարդիկ գիւղ և քաղաք շինել և միատեղ բնակիլ, որ փոխադարձ օգնականութիւն ընեն, և միմեանց զգակցութիւնը լեցընեն։ Ա՛ռ յիրաւի՝ լծվարն երկիր չէր կրնար վարէր, եթէ դարբինն խոփ և մանգաղ չը շինէր։ Ոստայնանկը կտաւ չէր կրնար գործէր, եթէ հիւսը գործարան և գործիք չը կազմէր։

Ա՛զգա հարկաւոր եղաւ իւրաքանչիւր մարդոյ անանկ մեկ առաքինութիւն մը, որ այլևայլ բնաւորութիւն և այլևայլ վիճակ ունեցող մարդկանց հետ կարենայ աղէկ կենցաղավարիլ, և ամենուն սիրելի ըլլալ, և իր պիտոյքը լեցընել. և այս առաքինութիւնն է՝ որ կըսվի Բաղաքավարութիւն։ Ա՛զգա Բաղաքավարութիւնն է առաքինութիւն, որով մարդս կը բարեկարգէ իր խօսքը և գործքը՝ ընկերութիւն և քաղաքական կենցաղավարութիւն մէջ։

Ա՛ռ ինչպէս ճարտար քժիշկները՝ զանազան ախտից և հիւանդութեց գանա-

զան դեղ և դարման սահմաներ են, որով հիւանդները իրենց մահաբեր ցաւէն ազատին և առողջանան։ Նոյնպէս ալ քաղաքավար անձինք զանազան պակասութիւնները ուղղելու համար՝ զանազան կանոններ սահմաներ են. որով տխմար տղայք և սոպռ մարդիք իրենց անկարգութիւնը բարեկարգեն, վայրենի վիճակէն ելլան, և քաղաքավար ըլլան։ Նոյնպէս արտաքին բարեկարգութիւնքնին կանոնաւորելով, հետզհետէ բարոյական առաքինութիւն ստանան. որով ըստ տեղոյն՝ ըստ անձին՝ և ըստ ժամանակին իրենց պարտաւորութիւնը ճանչնան և կատարեն, և հանգիստ և երջանիկ կեանք վարեն։

Հեղինակները բարուք կենցաղավարութիւն վրայ շատ կերպ կանոններ աւանդեր են. իսկ մենք անոնց մէջէն ժամանակիս և տեղոյս յարմար եղածները ծաղկաքաղ ընելով դրինք. բայց ամէն մէնէն յառաջ դպրոցական մանկանց հարկաւոր եղածները, և ապա խուրքանչիւր հասակի և վիճակի պատշաճեալ կանոնները, ոչ զի ամենուն ալ օգտակար ըլլայ։

ԳԼՈՒԽ · Ա։

Կանոն դպրոցական գայօշ մանկանց։

Ա · Երբ առաքվանց քունէն կելլաք, երեսնիդ լվացէք և խաչակնքեցէք ըսելով · Յանուն Հօր և որդւոյ և Հոգւոյն Ամէն։ Որդի եթէ վարժապետէն եկեղեցի երթալու պատուէր ունիք նէ, առանց ծուլութիւն գնացէք, և Ջերմեռանդութիւն աղօթեցէք · և որդի եթէ չունիք, պարկեշտութիւն դպրատուն գնացէք · աստուանդին մի՛ երերաք · տուներուն խանութներուն առջևը մի՛ կանգնիք։

Բ · Երբ որ դպրատուն մտնաք, երեսնիդ բերաննիդ և ձեռքերնիդ լվացված և մաքուր պիտի ըլլայ, և ըղձունկներնիդ կըտրած։ Եւ ինչպէս սովորութիւն է, վարժապետին գլուխ ծռելով խոնարհութիւն ըրէք, և տեղերնիդ նըստեցէք։ Բայց թէ հարկաւոր գործ պատահի, և դպրատուն ուշ երթալու ըլլաք, ձշմարիտ պատճառը վարժապետին պատմեցէք։

Գ · Աստուան աղօթքը ըսված ատե-

նը՝ ծընկան վրայ եկէք, բարև բռնե-
ցէք. և ապա լուռ Համարնիդ սերտե-
ցէք, և գրերնիդ գրեցէք։ Նթէ վար-
ժապետնիդ ձեզի բանմը հարցընէ, ոտ-
քի վրայ ելէք, և այնպէս պատասխան
տուէք։

Դ. Նէսաւուր աղօթքին առենը, մի-
սանգամ ծնկան վրայ եկէք, և կարգաւ
սեղանատունը գնացէք. և ապա ձեռ-
քերնիդ լըվացէք տեղերնիդ եկէք. և
յետ գոհուէ հայրմերին, ձեր գործ-
քին պարապեցէք։

Ե. Նթէ ձեր քովը նստողը՝ հարկա-
ւոր պատճառով մը տեղէն ելլայ, անոր
տեղը մի՛ նստիք, անոր թուղթը կամ
գրիչը մի՛ առնէք։

Զ. Ասէկ մէկի հետ բան մի՛ փոխէք.
բան մի՛ գնէք. բան մի՛ ծախէք. խօսակ
ցուէք ժամանակը դատարկ մի՛ անցընէք։

Է. Ոչ ուրք ղձեզ մոռնալով՝ ոտքերը-
նուդ հետ մի՛ խաղաք. բերանդիդ բաց
մի՛ թողուք. մատով քիթ մի՛ խառնէք.
և այլ սատնց պէս ան[illegible] բաներ մի՛
ընէք. որպէսի են բերու[illegible]ել. աչք
բանալ գոցել. թուշ ուռեցընել. լեզու

հանել. պրուկունք խաճնել. ակռայ կը ձրացընել. ըղունկ ծամել, և այլն։

Ը. Թեզնիքով կամ փէշով քթերնիդ մի՛ սրբէք. այլ թաշկինակ (խարբաց) պահեցէք վրանիդ, և անով սրբեցէք։

Թ. Թէ մարդու քով նստած ատենը նիդ թքնելու ըլլաք, երեսնիդ մեկ կողմը դարձուցէք, թաշկինակի մէջ թքէք. և թքնելէն յետոյ՝ չըլլայ որ թաշկինակը բանաք մէջը նայիք. վասն զի շատ զզվելի բան է։

Ժ. Փրունգտալու ատենը, ձեռքերնիդ կամ թաշկինակնիդ բերաններուդ դէմ՝ բերէք. չըլլայ որ թուքերնիդ այլոց վրայ ցանիկ։

ԺԱ. Նրեկոյեան աղօթքը ըսելէն ետև, երբ ազատ ըլլալու կարգը ձեզի կուգայ, էլէք վարժապետին գլուխ ծռելով խոնարհութիւն ըրէք, և ապա գնացէք։

ԺԲ. Ննասպարհին ձեռքերնիդ վրայտ մի՛ առնէք. քար մի՛ նետէք. մեկըզմեկ մի՛ հրէք. մի՛ ծաղրեցէք. ասոնց անդին մի՛ կանգնիք. մի՛ վազէք, հանդարտ գնացէք։ Նթէ ձմեռ ժամանակ է, չրե-

լուն մէջէն կամ ցեխոտ տեղերէն մի՛
քալէք. երկու ձեռքերնիդ մեկէն չէ՞
այլ երնիդ մի՛ դնէք, չըլլայ որ ճանաք և
ձեռասէք։

ԺԳ. Եթէ մեկը մարմնոյ ապատ կամ
տգեղութիւն ունի, անոր վրայ մի՛ ծիծա-
ղիք։ Կամ թէ մեկը վարժապետէն չէ՞ խ
լասերը է, կամ ծեծ կերեր է, անոր երե-
սը մի՛ տաք, և ուրիշին մի՛ պատմէք։

ԺԴ. Երբ որ տուն կերթաք, ձեր ծնո
ղաց ձեռքը պագէք. եթէ ձմռըվան
առեն է, և թաղարով կրակ կայ, կածա-
ռով կամ այլ ինչ բանով կրակին հետ
մի՛ խաղաք. կամ գէշ հոտ ունեցող բան
կրակին մէջ մի՛ ձգէք. կամ թաղարին
մէջը մի՛ թքնէք։

ԺԵ. Ի՞ղունկներնիդ մի՛ թողուք որ եր
կրննայ. շաբաթը անգամմը մկրատով
կամ զմելիով կտրեցէք առանձին տեղ
մը նստելով. վասն զի տմարդութիւն մար-
դու առջև կտրելը։

ԺԶ. Կիրակի օրերը անպատճառ նը
եկեղեցի գնացէք, և լուսաբ աղօթեցէք.
և չըլլայ որ նը պատարագը կիստ թո-
ղուք, և Աստուծոյ կերկրկին, կամ Հոգի

ային ելլաք. այլ մինչև աւարտը կեցէք, որ լման վարձք առնէք. և ապա շիտակ տուն դարձէք։ Կերակրէն ետև փողոց ներըը մի՛ ելլաք շրջիք. վատթար մանկանց հետ մի՛ խաղաք. տանը մէջ անմեղ խաղուց պարապեցէք։

ԺԷ. Ա. Երիջապէս՝ սուտ խօսք, երդում, զրպարտուի, բամբասանք, հայհոյուի, և այլ այնպէս բան՝ որ մարդկութիւն և քրիստոնէուն չը վայելէր, բերաննիդ ամենևին մի՛ առնէք, միտք բերելով նոր աւաքելոյն խրատը որ կը պատուիրէ։ * Ամենայն բան տգեղ՝ի բերանոյ ձերմէ մի՛ ելցէ. ‖ Եփես. Դ. 29։ Ամէն ձեր ամէն խօսքը համեստ և մաքուր պիտի ըլլայ. ինչպէս նոյն նոր աւաքեալը կըսէ։ * Բանն ձեր յամ ժամ լի շնորհօք ՅՈՒ, իբրև աղիւ համեմեալ լիցի. ‖ Հոպ. Դ. 6։

ԳԼ. Բ։

Ինչպէս յառաջն ըսինք, տըղայոմը մանկուն ատենը ընտոր սորվի, մեծուն

ժամանակն ալ անտանկ կը մնայ • ապա պիտի չանայք որ 'ի մանկուէ կրթը՝ վիք, շէնք ու շնորք ունենայ ձեր նատ՝ ը կանգնելը, ուտելը խմելը, և բոլոր կենցաղավարութիւնը։

ԳԼ. Գ։

Կանոն անչոշինէն ելլալու։

ա. Լրբ. քընէն կարթընանք, շուտ մը հանդերձնիդ հագէք. կիսահագուստ մի՛ շրջիք, չըլլայ որ մինք և հիվընանք. կամ պատվաւոր մարդ մը դէմերնիդ ելլայ, և ամօթ կրէք։

բ. Ձեռքերնիդ, երեսնիդ, բերաննիդ, ականջնիդ աղէկմը լըվացէք. որ բերաննիդ չը հոտի, և ականջերնիդ չը փըտի։ Լրբ. եթէ ջուրը պաղ ըլլայ, շատ աղէկ է. վասն զի պաղ ջրով լըվացվիլը խիստ օգտակար և առողջարար է մարդուս։ Բայց նայեցէք որ լաթերնիդ չը թրջէք. ջուրը աստիս անդին չը ցաթկըցընէք։ գաստառակը (գէշէրը)

ԼՍՄԿ.ՍՍՈ ԳՐԱԴԱՐԱՆԻ

բոլորովին չը թրջէք՝ այլ մեկ կողմը մի՞
այն , որ կարեն ուրիշներն ալ նոյն
դասատուակովը սրբըվիլ։

Դ. Եթէ կըրնաք եկեղեցի երթալ ,
առանց դանդաղելոյ գացէք. իսկ եթէ
չէք կըրնար , տանը մէջը ձեր սովորա՞
կան աղօթքը ըրէք . այ շնորհակալուն
տըվէք որ այն գիշերը հանգիստ քնով
ձեզի առաւօտուն հասուց . և խնդրե՞
ցէք յայ՝ որ նոյն օրն ալ խաղաղութ և
առանց մեղաց պահէ։

Դ. Յօն և կիրակի օրերը անպատճառ
եկեղեցի գնացէք , նախ երեմնիդ խա՞
չակնքեցէք , հայր մեր ըսէք , և ծնրա՞
դրուք աղօթեցէք . և ապա լուք մի՛ա
դրէք ճծային ժամերգուն և նը պա՞
տարագին։

Ե. Եկեղեցոյ մէջ բարձրաձայն ա՞
ղօթք մի՛ ընէք , որ այլոց դիտաւորութիը
և աղօթքը չը խափանի . և չը լլայ որ
հոգևոր պաշտամանց մոտադրութիը թո՞
ղուք , և միմեանց հետ խօսակցուի ընէք.
այլ լուութիբ մնքերնիդ առ ճծ վերու՞
ցէք , որ անպտուղ չելլաք . վա՞ղ ի կըսե
առաքեալը։ * Կացից յաղօթս հոգւով,

կացից յաղօթս և մնաք. սաղմոս ասացից հոգւով, սաղմոս ասացից և մնաք։ || ՃԻ, ՀՈՐՆ. ԺԴ. 15։

ԳԼ. Դ։

Կանոն դալէլու։

Ա. Հնարքով քալելու համար պէտք է որ՝ ոտքերնիդ այնչափ վերցընէք որ գետինը չը քերէ, քըսքրտս ձայն չը հանէ. քայլերնիդ (ապրնիդ) ոչ մեծ և ոչ պըզտիկ՝ այլ չափաւոր ըլլայ։

Բ. Դալէլու ատեննիդ՝ գոռոզ և ամբարտաւան մարդոց նման գլուխնիդ բարձր մի՛ բռնէք. և կամ՝ բան փընտրող մի պէս՝ դէպ 'ի գետին շատ մի՛ ծռէք. այլ իր բնական դիրքովը քալեցէք։

Գ. Ձեռքերնիդ եռևնիդ մի՛ կապէք. և կամ սերմն ցանող մի պէս մի՛ փռէք. և հոմրիշով (ընդոպիհոշ) ձանապարհին մի՛ խաղաք։

Դ. Ամէն քայլափոխի հոգմակոծեալ նաւի պէս կողմէ կողմ մի՛ շարժիք. չա-

փէն աւելի ծանր մի՛ քալէք, և մի՛ խիստ արտորանօք, քայց եթէ ստիպող առիթ մը՝ կամ հարկաւոր գործը պատահի։

Է. Ճանապարհին միրգ կամ այլ ինչ բան մի՛ ուտէք. ինքնիրէնդիդ մի՛ խօսիք. և խաղ կամ տաղ ըսելով՝ քթերուդ տակէն ձայն մի՛ հանէք։

Ը. Կարգաւոր կամ ուշխան դիմացնիդ ելլայ նէ, ճանապարհին մայթէն (խաչաբ ըսէն) վար իջէք. եթէ ծանօթ մարդ է, հանդերձնիդ ամիսուն բռնեցէք, և պարկեշտութիւն կանգնեցէք։

Է. Ինթէ տարիքով կամ պատվով մեծիմը հետ տեղ երթալու ըլլաք, միշտ ջանացէք որ անոր ետևէն, կամ թէ քիշմը ետօք վարի կողմէն քալէք։ Ինթէ ձեզի հետ խօսելու ըլլայ, խոնարհութիւն պատասխան տուէք. և չը ըլլայ որ հետը բարձր խօսիք, կամ ըրբաբար ծիծաղիք։

Ը. Ինթէ պատահի՝ որ եկեղեցի կամ տուն կամ սենեակ մեծիմը հետ պիտի մնաք, սպասեցէք որ մեծը առաջ մտնայ, և ապա դուք։

Թ. Ինթէ տեղը կը խըրկէ վարժա-

պետնիդ կամ ծնողքնիդ, կամ վարպետ
նիդ, ինչ խօսք ձեզի ըսին՝ լաւ մըտքեր
նիդ պահեցէք. և ինչ որ ըսին՝ նոյնը
խօսեցէք, ձեր քովէն բան մի՛ խառնէք։
Բայց եթէ բարկուն ժամանակը պատա
հիք, և երկու կողմանց մեկը՝ վատ և ա-
նարդ խօսք մը ըսէ, կամ հայհոյութիւն
ընէ, զայն մի՛ ըսէք. այլ միայն բուն և
հարկաւոր խօսքը պատմեցէք. որ չըլլայ
թէ խռովութիւն կամ թշնամութիւն ձգած-
ըլլաք անոնց մէջը։

ԳԼ. Ե։

Կանոն նապէլոս չանգնէլոս։

ա. Արդ տեղմը երթաք, ուր ձեզնէ
մեծ պատվաւոր մարդ՝ կարգաւոր կամ
իշխան նըստեր է, պատվաւորին ձեռքը
պագէք. և եթէ նստողքը հաւասարա-
պատիւ մարդիկ են՝ նոյ և ա խոնարհութիւն
ըրէք, վարի կողմը բարև ըրուելով
կանգնեցէք, ինքնիրենդ մի՛ նստիք։
Ան թէ հաւասարապատիւ չեն, միայն

մեծին ձեռքը պապէք, և շնորհքով կանգ
նեցէք։ Ոտքերնիդ խիստ իրարու քով
չըլլայ, և ոչ խիստ իրարմէ քաց, այլ
քիչմը մեկըզմեկէ հեռու։

Ը. Երբ հրավիրէն նստելու, հան
դերձնիդ ամփոփեցէք, խոնարհութի
ըրէք, վարի կողմերը ծունկ չոգելով
նըստեցէք։

Թ. Նըստելնիդ ալ ոնշնորք չըլլայ.
ծունկերնիդ իրարմէ մի՛ զատէք. կըռ
նըկի կամ կուրծքի վրայ մի՛ ծռիք. գի
նովի պէս մի՛ երերաք, հանդարտ և շի
տակ նըստեցէք։

Ժ. Եթէ խօսք ունիք խօսելու, դուք
ձեզնէ խակոյն մի՛ խօսիք. նայեցէք որ
մեծը ձեզի հարցընէ, և դուք ան ատե
նը խօսիք։

Ե. Երբ հաւասար ընկերաց մէջ նըս
տիք, տակաւին զգուշութի ունեցէք.
ոտքերնիդ մի՛ երերցընէք, մեկ մեկի վրայ
մի՛ դնէք, և մի՛ երկրնցընէք. կըռթընե
լով մի՛ նըստիք, կըռնակնիդ ուրիշի մի՛
դարձընէք. դուք ձեզի թուղթ մի՛ կար
դաք, քըթերուդ տակէն խաղ կամ տաղ
մի՛ ըսէք։ Եթէ քուներ ընիդ գայ նէ,

ոտքի վրայ ելէք, դուք զձեզ զգաստաց ցուցէք, բազմութեան մէջ մի՛ մերձաւորէք։

Ղ. Երբ ոտքի վրայ պիտի ելլաք, ուրիշի վրայ մի՛ կրութենիք. ձեռքով գետինը մի՛ հրէք, այլ շիտակ առանց վար ծռելու ելէք։

Է. Եթէ ընկերներդ բաժնվելու երթալու ըլլաք, նրաստոզներուն շնորհակալութիւն և խոնարհութիւն ըրէք, և ապա գնացէք։

ԳԼ. Զ։

Լանոն հէրաչոր ուրբաթ։

Ա. Երբ սեղան պիտի նստիք, ձեռքերնիդ լվացէք. և մինչև ձեզնէ մեծը չընստի՝ դուք մի՛ նստիք. և նայեցէք որ վարի կողմերը նստիք։

Բ. Յետ օրհնուէ սեղանին, ապասեցէք որ ձեզնէ մեծը կերակրոյն ձեռք երկընցընէ, և ապա դուք ալ ձեռք երկընցուցէք։ Այս սովորութիւը պահեցէք ամէն տեսակ ուտելուի վրայ՝ որ սե-

ղանը կը դընեն։

Դ. Սեղանի շատ մօտ կամ շատ հեռու մի՛ նստիք. սեղանի վրայ էյնալու ոչ մի՛ ընէք, կամ թեւերնիդ վրան մի՛ դնէք։

Դ. Պատառներնիդ ոչ խիստ մեծ՝ և ոչ խիստ փոքր ըլլայ. և կերակուրը այնքան մի՛ լեցընէք բերաննիդ, որ ամէն ակռաներուս ծամէք. այլ չափաւոր ըրէք, որ կարենաք մեկ կողմով ծամել։

Ե. Կերակուրը խիստ արտորանօք կամ հեվալով մի՛ ուտէք, այլ միջոց տալով. և ծամելու ձայնը մի՛ հանէք, կամ շը թունքնիդ մի՛ ջրվրտցընէք։

Զ. Ո՞եկ պատառը չը կերած, մեկալ պատառը բերաննիդ մի՛ դընէք. ձեր խածած պատառը՝ կերակուրին մէջը մի՛ թաթխէք։

Է. Եթէ պատառաքաղ (չանալ) գործածելու սովորութիւն ունիք, յարմար եղած կերակուրը անով կերէք. և եթէ սովորութիւն չունիք նէ, երբէք մատով ա՞ ուէք, ամէն մատներնիդ մի՛ թաթխէք։

Ը. Եթէ պատահի՝ որ ծամած պատառներուդ մէջը քար՝ կամ այլ ինչ չուտվելու բան գըտնըվի, պէտքը չէ

շուտմը մարդոյ առաջև գանելով դուրս հանել. այլ կամացուկ մը ձեռքերնիդ առէք, եթէ փիաթայ ունիք՝ անոր մեկ կողմը դրէք. և եթէ չունիք՝ սեղանին մէջը ձեր առջևը դրէք։ Իսկ եթէ զըզվելի բան է, պատճառանօք մը դուրս ելէք, և մարդու ցոյց չը տալով թափեցէք։ Գ. Յսպէս եթէ կերած կերակուր ներուդ մէջը փուշ կամ կուտ կայ, փիաթային մէջը կամ սեղանին վրայ գլուխ ծռելով թքնելու պէս բերաննէրդ մի՛ ձգէք. այլ ձեռքերնիդ առէք և այնպէս դրէք։

Թ. Թաթախեալ ձեռքով դըգալ կամ պատառաքաղ մի՛ բռնէք. կամ աղամանէն աղ մի՛ առնուք. և կամ գլուխնիդ կամ մարմինդ մի՛ քերէք։

Ժ. Եթէ կերակուր ունիք բերանդ, մինչև կուլ չը տաք մարդու հետ մի՛ խօսակցիք, և ջուր կամ գինի մի՛ խմէք։

ԺԱ. Խմելն՝ մի՛ ֆշաք. քթով. և մի՛ կուռթ կուռթ ընելով խմէք. և մի՛ հառաչէք յետ խմելոյն. և շրթունքնիդ մի՛ սրբէք ծրծելով, կամ լեզվով, կամ ձեռքով, այլ ձեր վրայի պատառովը։

ԺԲ. Երբ գինի խմէք, ձեզնէ մեծին խոնարհուի ըրէք, և երեսնիդ մեկ կողմը դարձուցէք. և խմելնիդ քիչ կամ չափաւոր ըլլայ։ Իսկ թէ բռնադատեն ևս աւելի խմել, որ թէպէտ օրէնք չէ բռնադատել, դուք խոնարհ խօսքերով ներումն խնդրեցէք, հրաժարեցէք և մի՛ խմէք, որ չըլլայ թէ գինոնինաք. վասն գինովութեան՝ մարդուն խելքը գըլխէն կը տանի, անպէտ և անշնորհք խօսքեր խօսել կու տայ, և ամենուն ծաղրը և կատակ կընէ։

ԺԳ. Հացին պատառը երկու ձեռքով կըտրեցէք. և մեկ ձեռքով մի՛ կըտրէք կըսմըթելով։

ԺԴ. Թէ հացերնիդ հատնի, ուրիշ առջևէն մի՛ քաշէք առնէք. այլ ձևովը սպասաւորին խմացուցէք. կամ թէ չէք համարձակիր, համբերեցէք որ տանուտէրը կամ սպասաւորը տեսնայ և տայ։

ԺԵ. Լման կամ ապուր կամ այլ ինչ ջրոտ կերակուր ըլլայ նէ, դրգալնիդ խիստ լեցուն մի՛ ընէք. որ պատառին վրայ չը թափթըփի։

ԺԶ. Կերակուրին մնացած ջուրը խը

ՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝ ԸՍԿԱՒԱՌԱԿԸ (ԱՍԿԱՆԸ) ԲԵՐԱՆՆԻԴ ՄԻ՛ ՏԱՆԻՔ. ԿԱՄ ԴԸԳԱԼԸ ԼԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԸՍԿԱՒԱՌԱԿԸ ՄԻ՛ ԾԸՌԷՔ. ԱՅԼ ԴԸԳԱԼՈՎ ՄԷՋԷՆ ԱՌԷՔ։

ԺԷ. ԱՍԿԸ ՄԻ՛ ԿՐԾԷՔ, ԵՒ ՄԻ՛ ԾԵԾԷՔ ՍԵՂԱՆԻՆ ԿԱՄ ՀԱՑԻՆ ՎՐԱՅ՝ ԾՈՒԾԸ ՀԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ։

ԺԸ. ԼՂՏՈՏ ՁԵՌՔԵՐՆԻԴ ՍԵՂԱՆԻ ՍՐՍԻՌՈՑԻՆ, ԵՒ ԿՈՒՐԾՔԻ ԿԱՄ ԾՆԿԱՆ ՊԱՏԱՏԱՌԻՆ ՄԻ՛ ՍԸՐԲԷՔ. ԱՅԼ ՉՆՉՈՑԱՒ ՄՈՒՔՐԵՑԷՔ. ԿԱՄ ՍՊԱՍԵՑԷՔ ՈՐ ԼՐՎԱՆԱՔ։

ԺԹ. ԱՒՐԻՇԻ ԿԵՐԱԾԻՆ ՎՐԱՅ ԱՉՔԵՐՆԻԴ ՄԻ՛ ԱՆԿԷՔ, ՈՐՊԷՍ ԹԷ ՊԱՏԱՌՆԻՆ ԿԸ ՀԱՄՐԷՔ։

Ի. ԹԱՆԱԿԻ ԾԱՐՈՎ ԿԱՄ ՊԱՏԱՌԱՔԱՂՈՎ ԿԱՄ ՄԱՆԵՐՈՎ ԱԿՌԱՆԵՐՆԻԴ ՄԻ՛ ԽԱՌՆԷՔ. ԱՅԼ ՅԵՏՈՅ ՔՉՎՈՐԻԿՈՎ (ՀԵԼՔՎ). ԿԱՄ ԱՒԵԼԻ ՃԵՂՄԸ ԼՐՎԱՑԷՔ, ԵՒ ԱՆՈՎ ՄՈՒՔՐԵՑԷՔ։

ԻԱ. ԿԵՐԱԿՈՒՐԻՆ ԱՂԷԿ ՊԱՏԱՌԸ, ԵՒ ՄԸՐԳԻՆ ԼԱՒԸ ԿԱՄ ԽՈՇՈՐԸ ՄԻ՛ ՁԱՏԷՔ. ԱՅԼ ՈՐ ԻՆՉ ԱՌՋԵՆԻԴ ԿԸԳԼԱՆԸՎԷ, ԱՌԱՆՑ ԽՈՐԵԼՈՅ ՁԱՅՆ ԿԵՐԷՔ։

ԻԲ. ԱՍԿԸ, ԿԱՄ ՄԸՐԳԻ ԿԵՂԵ, ԿԱՄ ԱՅԼ ԻՆՉ ԱՅՍՊԻՍԻ՝ ՍԵՂԱՆԻՆ ՏԱԿԸ ՄԻ՛ ՃԳԷՔ.

այլ փիսթային մէջը, կամ առաջևնէդ դրէք։

ԼԺ. Եթէ կշտանաք, խսկոյն սեղանէն մի՛ ելլաք. այլ սպասէցէք մինչև որ ուրիշներն ալ կըշտանան, և գոհութեան աղօթքը ըսեն։

ԼԺ. Յետ կշտանալոյն՝ մի՛ խաղաք սեղանին վրայ դանակով, կամ դըգալով, կամ ոսկը կոտրելով, կամ կուտ կոտրելով. այլ հանդարտ նստեցէք։

ԼԺ. Եթէ ուրիշները դադարեցան ուտելէն, դուք ալ մի՛ ուտէք։

ԼԺ. Երբ սեղանին գոհութեան աղօթքը կըսվի, եթէ ձեզի հաւասար մարդիկ են, հոն լըվացվեցէք։ Իսկ եթէ պատվաւոր անձինք են, դուրս ելէք և լըվացվեցէք։

ԳԼ. Է։

Պաղաքաւոր և կրթեալ մարդը՝ անանկ կենցաղավարուի կրնէ իւրաքանչիւր մարդու հետ, որ ինքը և գործքը ամենուն սիրելի և հաճոյ կըլլայ։

Ա. Ոչ ոք յառաջմանէ կը մտածէ, թէ

ինչ բան պիտի խօսի , կամ ինչ գործ պիտի ընէ ։ Նաև կը կշռէ մտօք , թէ ինքը ինչ աստիճան մարդ է , և դիմացի՝ նը ինչ . եկեղեցական թէ աշխարհա՝ կան , իշխանաւոր թէ հասարակ , իմաստուն թէ տգէտ ։

Յետ այնորիկ կը նայի թէ ո՞ւր՝ և ինչ տեղ է . ուրախութե՛ տուն թէ սգոյ . բարեկամի մէջ է թէ օտարի , բազմամարդ տեղ թէ առանձին ։

Յամանակն ալ կը նայի , թէ տեսնը վաղ մարդը ինչ վիճակի մէջ է . յաջողութե՛ թէ ձախորդութե՛ , հիւանդութե՛ թէ առողջութե՛ , զբաղմանց մէջ թէ հանգստութե՛ ։

Ասոնց պէս ալ ուրիշ ամէն պարագանեերը լաւ մտածելով՝ կը կարգաւորէ իր ամէն խօսքը և գործքը ։

Ա՛ ղի շատ անգամ կը պատահի ա՝ նանկ անձուն՝ խօսք կամ կոպիտ շարժմունք , որ նեերելի պակասութի՛ կը սեպ՝ վին՝ եթէ մեկը ընելու ըլլայ հասարակ մարդումը հետ . բայց նոյն խօսքը և շարժմունքը՝ եթէ Պատրիարգի կամ առաջնորդի կամ արդոյ իշխանաւորի

հետ մեկ կոշտ մարդմը համարձակի և ընէ նէ, մեծ յանդգնութիւն է և յանցանք. և կըլլայ պարտաւոր դատաստանի և պատժոյ։

Ուստի այժմ այս Պաղաքալարուն գրքոյկը՝ ոչ թէ միայն տխմար տղայոց համար, այլև ասանկ տմարդի մարդկանց համար յօրինեալ տպագրեցաւ. ոչ զի անանկներն ալ կարդան, և իրենց սոպռութիւնը ճանչնան, և մարդավարի ըլլալու ջանք ընեն։

ԳԼ. Ը։

Կանոն չէնցաղավարութիւն։

Ա. Պէտք չէ ընկերութիւն մէջ՝ մարդմը իր առանձնական հաճոյքը և կամքը կատարելու համար այլոց սրտնեղուի տալ։ Որ օրինակ՝ մեկմը բաղմուն հետ սեղան պիտի նստի, ան առենը ուրիշ իր սրտին ուզած բանին հետ պարապի, և բաղմութիւնը իրէն սպասել տայ. վա՜յ զի ինչպէս խմաստունքը կըսեն, ագեղէ

այն մասը՝ որ բոլորին չը համաձայնիր։

Բ. Պէտք չէ ընկերութեան մէջ ոչինչ և դատարկ բանիմը համար դըժվարիլ, և երես թըթվեցընել։ Որպէս թէ՝ վեր տեղ չը նըստեցուցին. կամ փափուկ անկողին չը ձգեցին. կամ բան հարցուցի շուտ չը պատասխանեցին. կամ ամիրայ և պարոն չըսին. կամ արժանեացս չափ ինծի պատիւ չըրին։ Ուստի ասանկ սը նոտի պատճառներով մեկ դի քաշվիլ, և բազմութէն զատ նստիլ՝ հպարտութէն յառաջ կու գայ։

Գ. Պէտք չէ ընկերութեան մէջ՝ խօսքին կամ գործքին իր հաճոյեցը դէմ գալուն համար սըրդողիլ, ուրիշը չէխել, և խռովութի և աղմուկ հանել. ինչպէս բարկացող մարդիկները կընեն. որ մեծ տը մարդութիւն է։

Դ. Պէտք չէ ընկերութեան մէջ՝ ուրիշի պակասութիը ուղղել, ըսելով թէ՝ այդ խօսքը խօսիլ չէր վայլեր. այդ գործքը արժան չէր ընել։ Ա՛ զի այլոց կանոնադիր և խրատիչ ըլլալ, անխատիր ամմէն մարդու չը վայելեր, այլ միայն ան կըրնայ ընել, որ հոգևոր կամ մարմնա-

ւոր իշխանութիւն ունի, կամ խիստ մտերմութիւն և համարձակութիւն ունի։

Է. Պէտք չէ խոժոռիլ և դէմքը ծռել, երբ որ իրմէն մեծը՝ կամ մտերիմ բարեկամը՝ ըրած պակասութիւնը իրէն կիմացնէ և կը խրատէ. այլ մանաւանդ շնորհակալ պիտի ըլլայ, և անոր խրատը մտիկ ընելով զինքը ուղղէ։ Զ. Ան զի ինչպէս իմաստունքը կըսեն, թէ այն մարդը ճշմարիտ բարեկամ սեպելու է մեզի, որ մեր պակասութիւնը երեսնիս կուտայ և կը խրատէ. և ոչ թէ այն՝ որ մեր ամէն խօսքը և գործքը կը գովէ։

Ը. Պէտք չէ տեսուի ըրած մարդուն ընական պակասութիւնը նայիլ ու քննել, և պատճառը հարցընել։ Դիցուք թէ՝ տեսնըված մարդուն մէկը միականի, կամ սապատող, կամ կաղ ըլլայ, կամ այլ ինչ մարմնաւոր արատ ունենայ, հետաքրքրքիր ըլլալ և հարցընել, թէ այս երբ կամ ինչէն քեզի պատահեցաւ։ Զ. Ա՛ զի սանկ խօսքերը ընկերին արատը երեսը տալ է, և հետաքրքրուէ կամ սոպռուէ յատաջ կուգայ։

Է. Պէտք չէ ուրիշին խօսքին կամ

գործքին խառնվիլ՝ որ այն բանը իրէն
չը պատշաճիր. մանաւանդ անանկ տեղ,
ուր շատ ընտանութիւն և համարձակութիւն
չունի։ Ա՛ն զի ամէն մարդ որչափ և
տգէտ ըլլայ, տակաւին իր տանը բանը
աղէկ կըրնայ գիտնալ՝ քան թէ այլք։

Ը. Պէտք չէ հետաքրքիր ըլլալ գիտ-
նալու համար այն բաները, որ այլք իր-
մէն ծածկել կը ջանան։ Ուստի որ-
ժամն չէ ականջ դնել այլոց խօսակցու-
թիւնը՝ որ առանձին կընեն. կամ անանկնե-
րուն քովը երթալ կամ մօտ պրտըտիլ, որ
թուղթ կամ ողջունագիր կը կարդան։
Բայց քաղաքավար մարդուն ալ չը վայ-
լէր ընկերուութեան մէջ՝ ուր այլք նստեր են,
առանձին թուղթ կարդալ. իսկ թէ
հարկն պահանջէ, պէտք է նըստողներէն
ներում խնդրել և ապա կարդալ։

Թ. Պէտք չէ անխորհրդաբար բանմը
խոստանալ մեկին, և յետոյ չը կըրնալով
իր խոստումը կատարել ըստ ժամանա-
կին, ամօթահար ըլլալ, կամ սուտըրուց
երևնալ։ Այլ յառաջ պէտք է իր ան-
ձին կարողութիւնը կշռել, և ժամանակին
պարագաները և յարմարութիւնը նկատել՝

թէ կըընայ մի կատարել, և յետոյ այն բանը խոստանալ։

Ժ. Պէտք չէ կենցաղավարութեան մէջ ծաղը ընել կամ վար զարնել օտար ազգի կամ քաղաքի սովորութիւնը, որ իրէն խորթ և անվայելուչ կերևնայ։ Ա՛ռ զի անոնց աչքէն կելլայ և ատելի կըլլայ. և յետոյ այնորիկ անոնք ալ իրէն թըշնամի կըլլան, և ինաս կը հասցընեն։

Ժա. Պէտք չէ կեղծաւորութիւն հրաժարում ցոյց տալ՝ երբ իշխանաւորմը մեկը կը հրաւիրէ իր տունը կամ իր սեղանը։ Ա՛ռ զի անոր սէրը և շնորքը ոչինչ ընել կերևնայ. այլ կը վայելէ շնորհակալութիւն ընդունիլ, և խոնարհութիւն երթալ։

Գլ. Թ։

Կանոն ուղղութեան։

Ա. Երբ բարեկամի տուն տեսութեան երթալ հարկաւորի, մեկէն 'ի մեկ անոր քովը երթալ չը վայելեր. այլ տանը բաց կը կենալ, և մեկի մը ձեռօք իմացընել.

երբ որ դառնայ և հրավիրէ, ան ատենը քովը պէտք է երթալ։ Իսկ եթէ քուն է, կամ առանձին գիր ունի, կամ այլ հարկաւոր բանի մը հետ զբաղեալ է, աղէկ է սպասելու յօժարութի ցոյց տալ, քան թէ իսկոյն քովը երթալ և անհանգիստ ընել։ Իսկ թէ ազգական և ընտանի է, և անխտիր երթևեկութի կայ միմեանց տունը, անանկին քովը համարձակ երթալ ամօթ չէ։

Ը. Հետ խոնարհութիւն բարեւելոյ՝ փոքր մի արժան է կանգնիլ. եթէ այն տեղը ուրիշ հաւասարապատիւ անձինք նըստեր են նէ, զանոնք ալ պէտք է ողջունել։ Եւ երբ հրավիրեն և տեղ ցոյց տան նըստելու, պէտք չէ հրավիրումը կրկնել տալ, այլ խոնարհութիւն նստիլ. և ապա երթալուն պատճառը իմացընել։

Եթէ խնդակից ըլլալու համար է, ծիծաղերես նստիլ պէտք է, և զըվարթ խօսքերով օրհնել և շնորհաւորել։ Իսկ եթէ ցաւակցութիւն համար է, ծանրը նըստիլ, և իր սրտին ցաւը յայտնել, և մեր թարական խօսքերով անոր տրտմութիւնը թեթևցընել։

Իսկ եթէ իր երթալը՝ անոր այցելութիւնը և տես գալուն փոխարէն հատուցումն է, պէ՛տք է խոնարհ խօսքերով իր անձը պարտաւոր ցոյց տալ անոր այցելութիւնը համար, որ առաջ խոնարհեցաւ եկաւ իր տեսութեանը։

Ե. Եթէ նատողները խօսք կը խօսէին, չը վայելէր հետաքրքիր ըլլալ և հարցընել՝ թէ ինչ կը խօսէիք, կամ թէ ինքն ալ անոնց խօսքին մէջը խառնըվիլ. այլ միայն լռութիւն ականջ դնել, մինչև բանին իսկութիւնը աղէկ տեղեակ ըլլալ. որ երբ իրէն ալ հարցընեն, ան ատենը իր գիտցածը խօսիլ։

Զ. Եթէ իշխանաւորի քով երթալ հարկ ըլլայ, իր երթալուն պատճառը յայտնելէն ետև, պէտք է լուռ կենալ, և նոր խօսք չը բանալ. և երբ իշխանաւորը ըսկըսի խօսիլ կամ բան հարցընել, ան ատենը քիչ խօսքով պարկեշտութիւնը պատասխանը տալ։

Է. Նաև նստելն ալ չափաւոր պիտի ըլլայ. վա՜ զի օրէ՛նք չէ երկար նստիլ և ձանձրուելի տալ. այլ քիչ մը ժամանակէ յետոյ, կամ ինչպէս սովորութիւն է՝ սուրճ

խմելէն յետոյ շատ չը կենալ. հրաժարուիլ
կան ողջոյն տալ, և շնորհակալութիւն ընե-
լով մնաք բարով ըսել։

Ղ. Երբ որ բարեկամի տեսութիւն եր-
թալ պատահի, եթէ բարեւագիր կամ
այլ ինչ թուղթ և գրուած գրտնըվի
հոն, տմարդութիւն է առնել կարդալ. վա-
զի եթէ խորհրդական գիր ալ չըլլայ
նէ, տակաւին անախորժ կը թըվի բա-
րեկամին։

ԳԼ. Ժ։

Կանոն հիվանդի այցելութիւն։

Ա. Երբ որ հիվանդի տեսութիւն եր-
թալ ըլլայ, քիչ խօսքով հարցընելու է
անոր որպիսութիւնը. ոչ թէ կը կամի լսել
անոր աղէկութիւն նշաններուն։ Ու պէտքը
չէ քանիմը անգամ հարցընել անոր որ-
պիսութիւնը, որ հիվանդին ձանձրութիւն ը-
րէ։ Այլ եթէ կուզէ աղէկ մը իմանալ,
յետոյ կըրնայ հարցընել ընտանեացը,
կամ տանը մէջը գտնըվողներուն, և իր

սիրտը հանդարտեցընել։

Բ. Հիվանդի քով զգուշանալու է բարձր ձայնով խօսելէն, ծիծաղելէն, մեռնելու կամ վախ բերելու բաներ պատմելէն. այլ հիվանդին սիրտ տալու խելացի խօսքեր խօսելու է։ Նա չը վայելէր բժիշկի պէս դեղ և կերակուր կանոնել հիվանդին, և բժշկին կանոնները պախարակել։ Այց առաւել զգուշանալու է երկար նստելէն, և փուտ և անպէտ խօսքերով հիվանդը ձանձրացընելէն։

Գ. Եթէ հիվանդին սենեակը գէշ և ղըզվելի հոտ գըտնըվի, չէ՛ արժան իւկցն քիթը գոցել և դուրս ելլալ, ըսելով թէ՝ գէշ հոտոյն չը կըրցայ նստիլ. այլ քաղցրութիւն պատճառել՝ թէ հիվանդին սրտնեղութիւն չը լլայ։

ԳԼ. ԺԱ.

Կանոն այցելութիւն։

Ա. Երբ մէկը տեսուչ համար բարեկամին տունը կու գայ, պէ՛տք չէ շատ

սպասել տալ բակը կամ սենեկին դուռը՝
սը, այլ շուտով ներս հրամայիրել։

Բ. Եթէ եկողը քան զինքն պատվաւոր է, պէտք է անոր առաջքը երթալ շատ կամ քիչ տեղ՝ անոր արժանաւորութիւնը չափ. իսկ եթէ հաւասարապատիւ անձն է, պէտք է տեղէն ելլալ, կամ բազմոցէն վար իջնալ։

Գ. Եկողին բարևը առնելէն յետոյ, շուտ մը պատվաւոր տեղ հրամայիրել. և յետ նստելոյն, ինքն ևս մօտ նստիլ. և անուշ խօսքերով հաճուելի ցոյց տալ անոր գալուն վրայ. և մինչև վերջը ամենևին ձանձրանալոյ կարծիք չը տալ՝ շատ նըստելուն համար։

Դ. Երբ որ եկողը երթալ կամենայ, յօժարուելի երևցընելու է այլ ևս նըստիլ. և երթալու ժամանակը շնորհակալ ելլալ անոր գալուն վրայ. և հետը ընկերակից ելլալ մինչև սենեկին դուռը, կամ սանդուխին գլուխը. և եթէ իշխան մարդ է, անոր հետ փողոցը ելլալ, և սպասել մինչև հեռանայ անկէց։ Բայց որովհետև ամէն մեկ քաղաքի և ազգի մէջ՝ այլև այլ սովորութիւն կայ այ-

ցելու՞ երթալու, կամ այցելու՞ եկողը ընդունելու։ ապա ո՛ր քաղաքի մէջ գըտնըվել պատահի, այն տեղըն բնակող մարդավարի անձանց վայելուչ սովորութիւնը պէտք է վարվիլ։

ԳԼ. ԺԲ։

Կանոն ժողովի։

Ա. Երբ որ ժողով կըլլայ՝ հարկաւոր բանմը խորհելու և տնօրինելու համար, և ժողովին գլխաւորը կը ծանուցանէ պատճառը թէ ի՞նչ բանի համար զանոնք կանչեր է, և ի՞նչ պիտի խորհին։ անտեղը պէ՛տք չէ ուրիշ մէկը իր կարծիքը ըսել, մինչև որ չը հարցընէ՝ թէ ի՞նչ կըսէք։

Բ. Ժողովի մէջ այն մարդը առաջ իր կարծիքը պիտի ըսէ, որ աստիճանաւ կամ պատվով մեծ է։

Գ. Երբ որ մէկը իր կարծիքը կըսէ, պէ՛տք է որ կարճ և համառօտ խօսքով վըճարէ, որ լսողներուն ձանձրութիւն չը տայ։

Դ. Ամենևին չը վայելը մեկին իր կարծիքին վրայ յամառիլ և ըսել, թէ իմ ըսածս կերպս խիստ յարմար է, ասանկ ընել արժան է. ոչ թէ կը կամի իր ըսածը բռնուած հաստատել ամենունուն. այլ պէտք է ըսել, իմ մտացս ասանկ բան մը եկաւ, ձեզի ալ ինչ որ վայելուչ կը թըվի՝ զայն խօսեցէք, և ամենունուն հաւանուած՝ որըն որ ժամանակիս յարմար՝ և հասարակաց օգտակար է, այն կերպը ընտրըվի։

Է. Թէ մեկը՝ անկարելի կամ ժամանակին անյարմար և կամ ինասակար կարծիք մը յառաջ բերէ, ան խօսքը ջրելու համար՝ պէտք չէ խօսողը վար զարնել, և կծու խօսքով անոր սիրտը կըսկըծցընել. այլ քաղցրութիւն պատճառը յառաջ բերելով հասկըցընել անոր, թէ հաւնելու կարծիք չէ. և սիրտը շահիլ՝ և ընկերական սիրոյն չը ինասել։ Այ զի թոյլ տըրված է ժողովքի մէջ, որ ամենամարդ իր կարծիքը համարձակ ըսէ։

Ջ. Թէ հասարակ և նըվաստ մարդ մը չընչին և ծիծաղական խօսք մը կըսէ, պէտք չէ լսել և ծաղր ընել. այլ չը

լսելու ձևով զանց առնելու է ընածը։

Է. Եթէ շատին կարծիքը մեկ մարդու կարծիքին դէմ ելլան, պէտք է որ այն մեկը լռէ, և իր կարծիքը հաստատելու ջանք չընէ։ Այ՝ զի իր պնդելէն այնպէս կերևնայ, թէ ուրիշ ամէնքը տգէտ են, և իր խօսքին զօրութիւնը չեն հասկընար. այլ մանաւանդ իրէն պէտք է՝ որ շատվորին կարծիքը ընտրէ, և քը նաւ տհաճութիւն և խոժոռում ցոյց չը տայ, ոչ թէ իր խորհուրդը բանի տեղ չը դրին և չը հաւանեցան, այլ իրէնց գիտցածը ըրին։

Ը. Եթէ շատին հաւանուչ հաստատած բանը՝ դիպվածմը պատահի և յառաջ չերթայ, պէ՛տք չէ որ ժողովին մէջէն մեկը յետոյ ըսէ, թէ իմ խորհրդիս չը հետևեցան, խօսքիս մտիկ չը ըրին, անոր համար չը յաջողեցաւ. վասն զի սանկ խօսքերը հպարտութիւն նշան են, և մարդը սատելի կընեն։

Թ. Ժողովը արձակմանէն յետոյ, պէ՛տք է որ խորհուրդը ծածուկ պահեն, և անոր վրայօք բան չը խօսին. ոչ զի բանորսակ և հետաքրքիր մարդիկ

խօսքին ձևերէն կարծիքի չերթան ինչ խորհուրդ ընելին։ Այս ոչ որ ժողովի չէ կանչուիր, անոր ալ պէտք չէ հետաքրքիր ըլլալ և հարցնել, ինչ բանի համար ժողով ըլլալը, և ինչպէս հաստատուելը։

ԳԼ. ԺԳ։

Կանոն խոստիցուն։

Ինչպէս զանգակը իր ձայնէն կը ճանաչուի՝ ամբողջ է թէ բեկած, ասոր պէս ալ մարդը իր խօսքէն յայտնի կը լայ՝ սոպռ է թէ քաղաքավար, բարեբարոյ թէ վատթար։ Ա՛ռ զի մարդուն լեզուն ու բերանը՝ մտքին լուսաւոր կամ կոյր ըլլալը, և սրտին՝ առ բարին կամ առ չարն յօժարուիլ ունենալն յայտնի կը նեն. ինչպէս ասն մեր կըսէ։ * Ի յաւելուածոյ սրտի խօսի բերան։ || Մատ. ԺԲ. 34։

Ա՛ռ. Պէտք է որ բերաննիս և լեզվընիս անմեղ և օգտակար խօսքերու կրթենք. ոչ զի կենցաղավարուելու մէջ՝ զբվարճուելու

համար անհամեստ խօսքեր կամ առաս-
պել պատմութիւններ չընենք, որ բարի վա-
րուց ընդդէմ են. ինչպէս ասրն մեր կը
պատվիրէ։ * Մենայն բան տգեղ՝ի բե-
րանց ձերմէ մի՛ ելցէ։ || Էփես. դ. 29։

բ. Պէտք է տեղին և ժամանակը նայ-
ինք, և անյարմար խօսք չը խօսինք. վա-
ղն չը վայելէր ուրախութիւն հանդէսի
մէջ՝ տրտմութիւն խօսք, և սուգ եղած տե-
ղը՝ ուրախութիւն խօսք ընել։ Այս թէ ը-
պատահման անանկ խօսք մեկը խօսի, որ
տեղւոյն և ժամանակին չը պատշաճիր,
ձևովմը անոր խօսքը փոխելու է, և ու-
րիշ յարմար բան մը պատմել։

գ. Պէտք է զգուշանալ խօսակցութիւն
մէջ որ չը գովեմք մեր անձը, և չը պար-
ծիմք թէ իմաստուն եմք կամ ազնիվա-
տոհմ. այլ պէտք է ջանալ՝ որ բարի քա-
ղաքացի ըլլանք. վասն զի ասանկ խօսքերը
հպարտութիւն նշան է. ուստի կրսէ իմաս-
տունը։ * Գովեսցէ զքեզ ընկերն, և
մի՛ քո բերան. օտարն՝ և մի՛ քո շրթունքն։
|| առաջ. իգ. 2։

Այնպես պէտք չէ որ մեր անձը աւելի
վար ջաղնենք, և անարգ և վատթար երևա

ցընենք. վասն զի կեղծաւորութիւն նշան է։

Դ. Պէտք է զգուշանամք ուրիշներըվար զարնելէն, բամբասանք ընելէն, որով մեր անձը կասկածելի կընենք և աստելի։ Ասոնք զի լրտեսները կարծիք կերթան, թէ ինչպէս զուրիշը մեր առջևը կը բամբասէ, ապա մեզի ալ ուրիշի քով կը պախարակէ. ուստի բարի մարդը՝ ընկերին պակասութիւնը կը լռէ, և աղէկութիւնը կը պատմէ։

Ե. Պէտք է որ բանաւորկութիւն լեզուներս պահենք, և չը խօսինք ան խօսքերը՝ որ ընկերի, բարեկամի, դրացնոյ, և աղգականի մէջ ատելութիւն և կռուիւ կը ձգէ։ Այս ոչ միայն գիտուած խօսելը չար է և վնասակար, այլև առանց մտադրութեամբ խօսելը. ուստի ասանկ քրիստոնեայ մարդիկները, ամենուն առջևը անարգ և զզվելի են։

Զ. Պէտք է զգուշանամք, որ կենցաղավարութեան մէջ գուժատու լուր (սև խաբար) չը տանք մարդու. այլ եթէ աւետեաց լուր մը գիտենք՝ զայն խօսինք, և եթէ չենք գիտեր՝ ուրիշ անմեղ խօսքեր ընենք։ Իսկ թէ հարկը ստիպէ

մեկիմը գուժ տալ , պէտք է որ անձը՝ տեղին՝ և ժամանակն նայինք , և ապա խոհեմութեամբ ազդենք որ ինչպես մը չը պատահի ։

Է . Պէտք է ընկերութեան մէջ՝ որ չը հակառակինք անանկ խօսքերուն՝ որ մեզի սուտ կերևնան ։ Որ օրինակ՝ եթէ մեկը նոր և չը լսուած բան մը կը պատմէ . եթէ մեք այն պատմութիւնը չը հաւատամք և չը հաւնիմք , տակաւին դէմ խօսիլ արժան չէ ։ Ա՛ն զի շատ բաներ կան՝ որ մեզի ճշմարիտ չեն երևնար , բայց կարելի է թէ ճշմարիտ ըլլան ։

Ուստի երբ սրբոց վարքերուն մէջը կերպ կերպ սքանչելիք կը պատմըվին , բարեկրօնութիւն չէ զանոնք անհաւատալի սեպել , այլ մանաւանդ հաւատալ . վասն զի անոնց նման շատ խելքէ դուրս բաներ կան՝ որ իրօք և ճշմարտութիւնք եղած են , ինչպէս նոր գրոց մէջը գրըված է ։

Ը . Պէտք է խոհեմ և զգուշաւոր ըլլանք , երբ ընկերութեան մէջ մեկի մը հետ զըվարճութեան համար կատակաբանութիւն (շաքոց) ընել կամենանք ։ Ա՛ն զի յառաջմանէ փորձած և գիտցած պիտի

ըլլանք անոր բաները և ախորժակը, մի՛ թէ զըվարճախօսու�կը տանի, թէ կը խոժոռի. վա՜ զի կան ոմանք՝ որ կը դըժվարին և բնաւ չեն ախորժէր։

Թ. Պէ՛տք է դիտել և զգուշանալ, չըլլայ որ մեկի մը բնական պակասուիը՝ կամ տգեղուիը և արատը, զըվարճախօսուիե նիւթ ընեն՝ և ընկերուիե մէջ յիշեն, որ այն մարդուն ամօթ կը բերէ. վա՜ զի ասանկ խօսքերէն ուրախուի ըլլալու տեղ՝ շատ անգամ տրտմուի է եղեր։

Ժ. Պէ՛տք է զըվարճախօսութիե մէջը զգուշանալ ամէն նախատական և ծանր և սիրտ կըսկըծցընող խօսքերէն։ Վա՜ զի ասանկով ընկերին սէրը ատելութի կը փոխեն. և զուր տեղը թարեկամուիը աւրելու պատճառ կըլլան։

Ժա. Պէ՛տք է մեծ խոհեմուի, երբ որ մեծ մը մեզի հետ կատակաբանուի ընէ. չըլլայ որ հասարակ մարդ մը անանկ խօսք խօսի, որ մեծին պատվոյն դըպչի. այլ խոնարհուիը պէ՛տք է վարվիլ, և մեծին պատիվը միշտ պահել։ Վա՜ զի անմիտութիը համարձակուի ընողները՝ շատ հեղ անարգանք և ինաս են կրեր։

ԳԼ. ԺԴ։

Կանոն շնորհով խօսելու։

Սարկաւագը է. քաղաքավար մարդուն ոչ թէ միայն աղէկ խօսքեր խօսիլ, այլ և աղէկ կերպիւ խօսիլ։ Ա՝ զի ինչ խօսք ըլլայ թող ըլլայ, եթէ խառնիխուռն է և շփոթ, լսողը բան մը չը հասկընար և կը ձանձրանայ։

Ա. Պէտք է ուրեմն որ խօսքերնուս մէջը կարգ դնենք. վերջի ըսելու բանը առաջ, և առաջի ըսելիքը վերջը չը խօսինք. այլ. ամէն խօսք իր տեղը, որ լսողին միտքը հանգչի և զբաղուի։

Բ. Պէտք է որ՝ առջի ըսածներնիս միտք պահենք, և աւելորդ կրկնութիւններ չընենք, և անպէտ պարագաները յիշելով՝ լսողները չը ձանձրացընենք։ Ուստի զգուշանալու է ամէն երկար և աւելորդ բաներէն, որ խօսքին շնորքը կը կորսընցընեն, և լսողները կը զզուեցընեն։

Գ. Չը սկսիր մեկ իրիմը վրայ խօսիլ, կամ պատմութիւն մը ընել. եթէ խօսքի մէջ պատմածներուս նման ուրիշ

բան մը պատահի նէ , պէ՛տք չէ բուն խօսքերնիս կիսակատար թողուլ , և այն միջանկեալ պատմութիւնը ըսկըսիլ . այլ նոր-ին աւելորդ բան չը խառնելով , առա-ջինն ըսկսած խօսքերնիս՝ պէտք է որ մինչև աւարտը շարունակենք . որ լըսողնե-րուն միտքը չը ծանրաբեռնի և չը ձանձ-րանայ ։

Դ . Երբ բաղմութեան մէջը մէկը կը խօ-սի , պէտք է որ ուրիշները լուռ նստին և մտիկ ընեն . և անոր խօսքը չը միջահա-տեն մինչև որ աւարտէ ։

Ե . Պէտք է խօսողին ալ՝ որ իր խօսքը աւարտելուն պէս լըռէ , և ուրիշին մի-ջոց տայ խօսելու ։ Ուսան տըմարդուն է այն՝ որ ոմանք շատախօսք կըլնեն . որ մէկ խօսքերնին լըմընցուցած չը լըմըն-ցուցած , ուրիշ խօսք մը նորէն կըսկը-սին . և եթէ բան մը չը գըտնան խօսե-լու , նոյն առաջին խօսածներնին կը կըրկնեն ։

Զ . Պէ՛տք է խօսողին շըրջահայեաց ըլլալ և նայիլ նստողներուն , թէ ար-դեօք սիրով ականջ կը դնեն իր ըսած-ներուն . ապա եթէ ձանձրուի կը տես-

նայ անոնց վրայ, պէ՛տք է խոհեմութիւն խակցին աւարտել իր խօսքը։

Է. Երբ մեկը բան մը ըսկըսեր է կը պատմէ, որ դուն ալ նոյն պատմութիւնը գիտես. պէ՛տք չէ անոր բերնէն առնես և դու պատմես. կամ թէ միջահատես անոր խօսքը՝ ըսելով, թէ իմացայ որ ղայս բանը պիտի պատմես, ես ան լըսեր եմ և գիտեմ։ Եթէ դու անկէց աղէկ գիտցած ըլլաս, տակաւին պէ՛տք է լըռել՝ մինչև նա սկսածը աւարտէ, և ապա դու ըսելիքդդ ըսէ։

Ը. Եթէ բաղմութեան մէջ մեկը կը խօսի, և ուրիշները մտիկ կնեն, դուն ալ պէտք է որ մտիկ ընես։ Եթէ դիպվածով մեկ բան մը չը հասկըցար, համբերէ մինչև իր խօսքը աւարտէ. և ապա քովի նստողներուդ հարցուր և իմացիր. կամ թողութիւն խնդրելով՝ իրէն հարցուր և հասկըցիր։

Թ. Եթէ քանի մը մարդ խակցին մեկ տեղ այլ և այլ բան հարցընեն քեզի, նայէ անոնց որն է պատվաւոր, յառաջ անոր պատասխան տուր, և ապա ուրիշներուն։

Ժ. Երբ մեկին բան պիտի հարցնես, կը նայիս որ ան առանը ուրիշի հետ կը խօսակցի, համբերէ դու մինչև իր խօսքը աւարտէ, և ապա հարցուր։

ԺԱ. Եթէ բազմութեան մէջ բան մը կը խօսիս կամ կը պատմես, և ուրիշը քո ըսածին կը հակառակի. պէտք չէ որ իսկոյն անոր դէմ խօսիս, և քո խօսքը դադարեցնես. այլ յարաջ դիտէ անձինքը և տեղին, եթէ յարմարութիւն ունի նէ՝ պատասխան տուր. եթէ չունի նէ՝ լռէ, որ բանը վիճաբանութիւն չլինայ։

ԺԲ. Եթէ բազմութեան մէջ գրանցվիս, ուր տեղ մեկ խընդիրի մը վրայ երկու մարդ վիճաբանութիւն կընեն. չէ՛ արժան քեզի մեկին կամ մեկալին կողմնակից ըլլաս, կամ խօսքով օգնես. վասն զի ասանկ բաներէն խռովութիւն և թշնամութիւն կելլայ. այլ անտարբեր եղիր, և որ կողմին խօսքը քեզի հաստատուն կը թվվի, այն խօսքը ընդունէ։

ԺԳ. Երբ մեկի մը հետ կը խօսիս, պէտք չէ խիստ մօտենալ լսողին. չըլլայ որ շունչդդ անոր երեսն հասնի. վասն զի շատ մարդիկ կան, որ չեն ուզեր ու-

ելիշի շունչը առնուլ։

ԺԴ. Խօսելդ ոչ խիստ ծանրը, և ոչ լսիլուտելով ըլլայ. և զգուշ եղիր որ թուքդ լսօղին վրայ չը ցաթկէ. և ձեռքովդ լսօղը չը մրշտես, լսեցիր մի, իմացար մի ըսելով. և ձայնդ չափաւորը հանես և չը պօռաս։

ԺԵ. Եթէ հարկաւորի խօսիլ եկեղեցական կամ աշխարհական մեծիմը հետ. զոր օրինակ՝ Պատրիարգի, կամ առաջնորդի, կամ աղգապետ իշխանի, և այլ այսպիսի խօսացողը գլխաւորի հետ, պէտք է որ ամէն կերպիւ զգուշանաս. նստելածքդ և կանգնելածքդ, և քոլոր խօսքդ և շարժմունքդ խոնարհութիւն և պարկեշտութիւն ըլլայ. և ամենևին համարձակու�իր կամ լրբուիր նշան մը քուվրադ պիտի չերևի։ Ա՛ռ զի եթէ չափդ չը ճանչնաս, և յամառութիւն կամ կամակորութիւն և լրբութիւն ընես, ան ատենը արդար իրաւամբ անարգուի և պատիժկը կրես, և ատելի կըլլաս։

ԳԼ. ԺԵ։

Լանան ծնողաց հետ հենցաղավարութիւն։

Տղայ մը երբ ինքիր զինքը կը ճանչնայ, նախ և առաջ իր անձը կը սիրէ. բայց յետոյ երբ կը տեսնայ, որ ծնողքը իրէն գթութիւն և խնամք կնեն, զանոնքալ կըսկսի սիրել։ Այս ահա ասկէց յառաջ կուգայ իր ամէն երախտաւորներն ալ սիրել. որոց առաջինն է Աստուած, որ զինքը ստեղծերէ և կը խնամէ։ Յետ այնորիկ և այլ բարերարութիւն ընողները, ինչպէս են, առաջնորդք, և քահանայք, և այլ հոգևորական անձինք՝ որ իրէն փրկարար խրատներ կուտան։ Նաև մարմնաւոր իշխանք, որ իրէն և իր ազգին խնամակալութիւն կընեն։ Այս վարժապետք՝ որ գիրենք կըրթեր են, և գրել և կարդալ և ճշտապաշտութիւն ուսուցեր են։ Այս արհեստի վարպետք՝ որ արհեստ կամ առըտուր սորվեցուցեր են, որով իրէնց ապրուստը կը շահին։

Բայց երբ կըսկսի իր անձը սիրել, կուզէ որ իր կամքը կատարի. ապա մարդուս իր ծնողքը և իր ըստեղծողը ձըշ

մարտապէս և սրբոյն մարտք սիրելոյ այն ժամանակը յայտնի կըլլայ, երբ որ իր ծընօղաց և իր ըստեղծօղին կամքը կը կատարէ. ինչպէս որ տէրն մեր կըսէ. * Որ ունի զպատուիրանս իմ՝ և պահէ զնոսա, նա է որ սիրէ զիս։ ||Յով. ԺԴ. 21։

Եւ քանզի մարդս անբան անասուն չէ, որ կարգ և կանոն չունենայ, և բը նական բերմամբ վարի, այլ բանաւոր է և խոհական. ապէ՛ռք է որ բարուրք Հա նապազմամբ և ընտրութիւն կենցաղավարի. և իրէն ամէն շարժմունքը և գործողու թիւնքը կարգ և կանոն ունենայ. որպէս զի անբան կենդանիներէն զատվի, և բանա կան ըլլալը Հանգցըվի։

Ա. Մարդուս առաջին և գլխաւոր պարտքը յետ Աստ, է պատիւ և մեծա րանքն, որ պիտի ընեն որդիք իրենց ծը նօղացը։ Այ զի զինքը ծներ և անու ցեր են, և բարի կրթութիւով պահեր և մեծցուցեր են. զինքը դպրատուն խը կեր են, և վարժապետի ձեռօք հարկա ւոր եղած ուսմունքները, և հաւատոց մասունքները տրվեր են. և տր հեսաի տրվեր են, որ իրենց մարմնաւոր

պէտքը վասաբկին և հոգան , և կարո-
տութի չը կրեն • և բազում վիշտ և տա-
ռապանք քաշեր են , որ զինքը մինչև ան
տարինքը հասուցեր են ։

Ասաի որդին մեռքը բերելով , թէ
իր կեանքը ծնողացմէն առեր է , և այս-
քան խնամք և բարերարութի տեսեր է ,
կը պարտաւորի իր ծնողքը պատվել և
մեծարել • որ ինքն ալ ոչ օրհնութիը ժա-
ռանգէ և բարի գըտնայ • ինչպէս ան-
պատվիրեաց ըսելով • * Պատուեա՛ զհայրն
քո և զմայրն քո • զի քեզ բարի լինիցի ,
և զի երկայնակեա՛ց լինիցիս 'ի վերայ երկ-
րին ։ || Եղ • Ի • 12 ։

Ուրայց պատիւ ընելը՝ միայն արտաքին
շարժմունքով և խօսքով չը լլար , հապա
սրտանց և գործքով պիտի ըլլայ ։

Բ • Պէտք է որդւոց հնազանդ ըլլալ
ծնողաց խրատուն , որ միշտ զաւակաց
շահուն համար է • ինչպէս ոչ թ. տուպերալը
կը պատուիրէ • * Որդիք՝ հնազանդ լե-
ցուք ծնողաց ձերոց 'ի տէր • զի այն է
արժան ։ || Եփես • Զ • 1 ։

Գ • Պէ՛տք է որ ծանր և կծու խօսքե-
րով ծնողաց սիրտը չը ցաւցընեն և չը

տրամեցընեն. և երբ իրէնց խրատ կու տան՝ դիմադարձուի չընեն և չը բարկա ցընեն. և կամ բարձի թողի ընելով երե սէ չը ձգեն և անարգանք չընեն. որպէս զի իրէնք ալ յետ ժամանակի իրէնց զա ւակներէն ասս ըրածներուն հատուցու մը անարգութի չը կրեն. ուստի կը գրէ իմաստունը. * Որդի որ անարգէ զհայր և մերժէ զմայր, ամօթ կրէ և նախատ ինգի։ || սաղ. ԺԹ. 26։

Դ. Պէտք է երախտագէտ ըլլան ծնող աց բարերարութիւնը. և ջանան որ անոնց երախտեաց փոխարէնը հատուցանեն։ Զու այս կըլլայ, երբ ծնողաց հիվան դութիւն կամ ծերութիւն ժամանակը՝ սիրով և յօժարութիւն կը ծառայեն. անոնց կա րօտութիւնը՝ իրէնց կարողութիւն չափ կը լե ցընեն. անոնց անէծքը չեն տունէր, օրհնութիւնը կը ժառանգեն. վասն զի գրեալ է. * Օրհնութիւն հօր հաստատէ զտունս որդւոյ՝ և անէծք մօր խախտեն 'ի հիմանէ։ || սիրաք. Գ. 10։

Ե. Պէտք է որ հեզութիւնը համբերութեան յանդիմանութիւնը և պատժոցը, որ ծը նողքը իրէնց կընեն. վասն զի անոնց յան

դիմանուելը և խրատը՝ սէր և գութ ունենալներէն յառաջ կու գայ, որ կու-
զէն իրէնց զաւակը գիշուէ արգելէն և բարի ընէն։ Ուստի աղէկ չընէր այն ծնողը, մանաւանդ թէ զաւակը չըսիրէր, որ զաւակին անկարգուելը չըպատ-
ժէր. ինչպէս խմաստունը կըսէ.
* Որ խնայէ 'ի գաւազան՝ ատեայ զորդի իւր. իսկ որ սիրէն՝ խնամով խրատէ։
|| առակ. ԺԳ. 24։

ԳԼ. ԺԶ։

Կանոն ընդհանրական իշխանաց հէտ հէնցպաշտպանելոյ։

ՈՒ. Պարտաւորուելի ունիմք յետ ծը-
նողաց, սիրով և յօժարութիւբ հնազանդ ըլլալ թագաւորին՝ և անկէ կարգեալ իշխաններուն. վասն զի ՈՒԾ է տրուէր ատ-
իշխանուելը՝ որ հաստատակուելը կառավարեն. վասն որոյ կըսէ առաքեալը. * Ոչ ուստ-
տէր է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ. և որ էին, յԱստուծոյ կարգեալ էին. || հռովմ. ԺԳ. 1։

Բ. Պէտք է որ՝ միշտ անոնց համար ա-
ղօթող ըլլանք, որ երկար կեանք և յա-
ջողութիւն վարեն իրենց իշխանութիւնը. վա-
ղն անոնք միշտ անհանգիստ կըլլան, որ
մենք հանգիստ և խաղաղ մնանք. իրենց
անձը վտանգի մէջ կը ձգեն, որ մեզի
թշնամիներուն պաշտպանեն. ամենևին
աչառութիւն չեն ըներ՝ անիրաւութիւն ընողնե-
րը կը պատժեն, որ մենք զրկանք և նե-
ղութիւն չը կրենք. ուստի կըսէ առաքեալը.
* Աղաչեմ, նախքան զամ առնել աղօթս՝
խնդրուածս՝ պաղատանս՝ գոհութիւս վա-
մամ մարդկան. մանաւանդ վասն թագաւո-
րաց և ամ իշխանաց. զի խաղաղութիւն և
հանդարտութիւն վարեսցուք զկեանս մեր
ամենայն աստուածպաշտութիւն և սրբութիւն։
|| ա. պօիմ. Բ. 1։

Գ. Պէտք է որ՝ թագաւորին և իր իշ-
խանաց բարեբարութիւնը և երախտիքը, և
մեզի ըրած շնորհքը և ողորմութիւնը ճանչ-
նանք, և անոնց հաւատարմութիւն և սրտի
մտօք ծառայենք. և ամէն պատվերները
և հրամանները կատարենք, որ մեր խա-
ղաղութիւն և օգտին համար կընեն. ուստի
կըսէ պետրոս առաքեալը. * Ընդանդ

լերուք ամ մարդկեղէն սաեղծուածոց
վա՛ն ան. եթէ թագաւորի՝ իբրև առա-
ւել ումեք, եթէ դատաւորաց՝ իբրև 'ի
նմանէ առաքելոց 'ի վրէժխնդրութի՛ չա-
րագործաց՝ և'ի գովութի՛ բարեգործացն։
|| ա. պէտ. բ. 13։

Ա. Զի՛նք է որ՝ մեր վրայ դրած որ-
քունական տուրքը և հարկը յօժարութի՛ամ
վճարենք իբրև մեր պարտքը. եթէ
ծանր ալ ըլլայ, տակաւին առանց տըր-
տունջելոց պիտի ջանանք ժամանակին վը-
ճարել. ոչ թէ միայն վախի պատճառաւ՝
այլև մեր խղճմտանքին դատողութե՛ամբ,
որ 'ի նեղքուստ մեղի ազդումն կու-
տայ, թէ պարտաւորէ՛ք հպատակ ըլլալ
և հատուցանել. ինչպէս առաքեալը կըսէ.
* Հարկ է հնազանդ լինել (թագաւո-
րաց) ոչ միայն վա՛ն բարկութե՛ն, այլև վա՛ն
մատցն խղճի։ || և թէ՝ * Հատուցէ՛ք
իւրաքանչիւր զպարտս. որուն զհարկ՝
զհարկն, որուն զմաքս՝ զմաքսն, որուն
զերկիւղ՝ զերկիւղն։ || հռոմ. ժգ. 5.
և 7։

Գ. Լ. ԺԷ.

Կանոն հոգևոր հոգեւոց հետ հենցաղավարութեան։

Ինչպէս թագաւորները և իշխանները կը ջանան մեր մարմնաւոր հանգստութեան համար, որ աշխարհի վրայ խաղաղ և ապահով ըլլանք. ասոր պէս ալ հոգևոր հովիւները միշտ կը հոգան և կաշխատին մեր հոգևոր շահուն համար, որ 'ի հանդերձեալ աշխարհը փառաւոր և երջանիկ ըլլանք։

ա. Պարտական եմք ապա անոնց անփոխարինելի երախտիքը ճանչնալ, և սրբոյ մտքով յարգել և մեծարել. որ այս վերկարար օրէնքները, պատուիրանքները, քի կենարար վարդապետութիւնները, և աքաղաղներուն քարոզութիւնները մեզի կը տրվը ցընեն. ուստի կրսէ առաքեալը. * Որ բարուք վերակացու լինին երիցունք՝ կրկին պատուոյ արժանի եղիցին. մանաւանդ որ աշխատիցին բանիւ և վարդապետութեամբ։ || ա. տիմ. Ե. 17։

բ. Պէտք է որ՝ անոնց որդիական սիրով հնազանդինք, և խօսքերնին մտիկ

ընենք, որ միշտ մեր հոգւոյն փրկութեան համար կը ջանան. բարի և շահաւէտ խրատներով կը յորդորեն, որ 'ի չարէն խորշինք, բարի գործոց հետևինք, և երկնից արքայութիւնը արժանի ըլլանք. ինչպէս կըսէ նոր առաքեալը. * Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց, և հը պատակ կացէք նոցա. զի նոքա տքնին վասն հոգւոց ձերոց՝ ոչ թէ համարս տալոց իցեն ընդ ձեր։ || Եբր. ժգ. 17։

գ. Պէտք է որ՝ անոնց խրատներէն և յանդիմանութիւններէն չը նեղասրտինք և չը խոժոռինք, թէ և երբեմն ծանր խօսքերով մեր անկարգութիւնը կը շտամբեն նէ։ Ա՝ զի ինչպէս խելացի հիվանդը երես չը դարձընէր բժշկէն՝ որ իրէն լեղի և կծու դեղ կու տայ, այլ սիրով կընդունի, գիտնալով՝ թէ իր առողջութիւնը համար է. ասոր պէս մենք ալ չը պիտի խոժոռինք մեր հոգևոր բժիշկէն, այլ առաւել պիտի սիրենք՝ երբ որ զմեզ կը յանդիմանէ, գիտնալով թէ մեր օգտին համար է. ուստի կըսէ առաքեալը. * Զաչեմ զձեզ ի զբաղբք՝ ճանաչել զվաստակաւորս և զվերակացուս ձեր 'ի տէր,

և զխրատիչս ձեր։ և համարեցարուք զնա
արժանիս առաւել սիրոյ՝ վասն գործոց նոցա։
|| Ա։ Ընդառ։ Ե։ 12։

Դ։ Պարտական եմք մեք կարեացը
չափ անունց տուրքք և նըվէրք տալ, որ
իրենց հարկաւոր պէտքը հոգան, կա-
ըօտուն չը կրեն։ որոց ունունք հանապազ
ոչ պաշտօն և փառաբանութիւն կը մատու-
ցանեն, եւ եկեղեցւոյ փրկագործ խորհ-
ուրդներըը կը կատարեն, որով որդեգիրը
ոչ կը լրանք։ և ունունք՝ ուղիղ հաւատք և
ճշմարտութիւն, և ընտիր վարք և բարե-
գործութիւն՝ անդադար քարոզութիւն մեզի
կը տրվեցընեն։ և ազգայուն լուսաւոր
և անմոլար Հանապարհին մեզի ուղեցոյց
և առաջնորդ կը լան։ Այդպա յիրաւի
պարտաւոր եմք, որ մենք ալ անունց մարմ-
նաւոր ապրուստը հոգանք։ ուստի կը
սէ առաքեալն։ * Որ եթէ զհոգեւորն
սերմանեցաք, մեծ ինչ է՝ եթէ զմարմնա-
ւորն հնձիցեմք։ || Ա։ Կորն։ Թ։ 11։

Ե։ Պէտք է որ՝ անունք չը վշտացընեմք
և չը տրտմեցընեմք անպատուութիւն խօս-
քով կամ գործքով։ վասն զի մենք անունց
ինչ որ կընեմք թէ պատիւ թէ անպատ-

վուԹՒ, զոլորն ալ առ. քա՜ կը վերաբերի։ Ա՛յդ մեշտ Ջանանք՝ որ պատիւ ընենք, և անոնց օրհնուԹիւն առնենք. վա՜ղ զի քա՜ ՇՐԻՆ մեր կըսէ. * Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ, և որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ։ || ղուկ. Ժ. 16։

ԳԼ. ԺԸ։

Կանոն փարոշա-ՐԷ ՀԱՏԸ։

ա. Պէտք է որ՝ առանց ձանձրանալոյ երԹանք, և ուղիղ սրտով ականջ դնենք քարոզին, որ հոգևոր հովիւներուն և վար դապետներուն կու տան կիրակի և տօն օրերը. որով ՇԱԾԱՅԻՆ հրամանը, և ՇԱ՛Ք եկեղեցոյ պատուիրանքը մեր միտքը կը ձգեն. և հոգևոր խրատներով մեզի կը յորդորեն, որ մեզաց պատՃառները կըտրենք, առաքինուԹիւնք հետևինք, ՇԱՅ ՃՇմարիտ ծառայուԹիւն ընենք, և յաւիտենական կեանց կենացն արժանանանք։

բ. Պէտք է որ՝ քարոզին առեղը ըզգաստ և արԹուն ըլլանք, և խոնարհ

հոգւով մոքերնիս քարոզողին խօսքին ուղղենք, և ուրիշ տեղ չը տանինք։ Վա՜ զի եթէ հոգևոր խրատները և վարդապետութիւնը արհամարհելով մեկ դէ՛ ձը գենք, և աշխարհի անօգուտ մտածմունքները ընենք, ահագին բանից լըսողութենէն անպըտուղ կելլանք։ Դ. Ապա պէտք է որ նոր առաքելոյն խրատը մըտքերնիս բերենք, որ կըսէ։ * Ա. Հաւասիկ ժամանակ ընդունելի, ահա օր փրկութեան։ Մի՛ և մի՛ իւրիք տայցէք պատճառս, զի մի՛ արատեսցի պաշտօնն։ || Բ. Կորն. Գ. 2։

Գ. Պէ՛տք չէ քարոզի ժամանակ քովինները հետ խօսինք, և անոնք որ փափագանօք մտիկ կընեն, հոգևոր և բարի խրատներէն զըրկենք։ Ա. Զի երբ բաղմութեան մէջ մեկը պատմութիւն մը կընէ, կամ զըվարճութեան բան մը կը խօսի, անքաղաքավարութիւն է՝ որ նստողները մտիկ չը ընեն, միմեանց հետ ուրիշ բան խօսին։ ապա որչափ առաւել անքաղաքավարութիւն է տմարդութիւն է՝ երբ քարոզիչը ահագին պատգամները կը սորվեցընէ, մենք քովիններնուս հետ խօսակցութիւն ընենք։ և այն օգտակար վար-

դատաւորէցը տկանջ չը դնէնք • որ կը
խրատէ զմեզ բարի և առաքինի ըլլալ •
վա՜ զի կրսէ առաքելը • * Ա՛մենայն գիրք
աստուածաշունչք և օգտակարք, 'ի վարդապե
տութիւն են և յանդիմանութիւն և յուղղութիւն
և 'ի խրատ արդարութեան ։ ||Բ • Տիմ • Գ • 16։

Դ • Պէ՛տք է որ՝ քարոզը մինչև աւար
տի նէ մտիկ ընէնք • վասն զի հոգևորին
սէր չունենալէն յառաջ կու գայ՝ սընո
տի պատճառով մը քարոզը կիսակատար
ձգել, և ժողովրդոց վրայ կոխկրտելով
և հրելով եկեղեցիէն դուրս ելլալ։
Ա՛պա թէ մեկը հարկաւոր գործ կամ
բնական տկարութիւն ունի, և ամբողջ քա
րոզը մտիկ ընելու ժամանակ չունի, ա
ղէկ է որ առաջուց անանկ տեղ մը կանգ
նի, որ եթէ քարոզը չաւարտած դուրս
ելլայ նէ, ժողովրդոց նեղութիւն և գայ
թակղութիւն չը տայ։

ԳԼ • ԺԹ։

Կանոն վարժապետի հետ չէնցաղավարուելու։

Ա • Պէ՛տք է որ՝ վարժապետնիս մեր
ծնողացը պէս պատուէնք • որ մեզի կը

կրթէ առանց ձանձրուէ։ և հոգւոյ և մարմնոյ հարկաւոր եղածները կը սորվը ցընէ։ Եւ ինչպէս պարտիզպանը նորա տունկ ծառերը կը խնամէ, չոր և անպէտ ճիւղերը կը կըտրէ, և լաւին և պիտանին կը պատվաստէ՝ որ պտղաբեր ըլլան։ ասորպէս ալ բարեջան վարժապետը իր աշակերտները կը դարմանէ և կը կրթէ՝ որ քաղաքավար, դիտուն, և բարի ըլլան։

Բ. Պէտք է որ՝ դաս առնելու և սորվելու ժամանակը ատոր անդին չը նայինք, մտքերնիս ամփոփ պահենք, և յոժարութիւն և ախորժակով մտիկ ընենք վարժապետին տրված դասին, որ շուտ և աղէկ սորվինք։ Եան զի մարդուս կեանքը կարճէ, սորվելիքները շատ, և ժամանակը փոփոխական։ Երբ յարմար միջոց կը կարծենք, յանկարծակի անակընկալ դիպվածմը կը պատահի, և մեզի ատեն չը թողուր որ սորվինք։ ապա քանի որ ժամանակ ունինք՝ ջանք ընէնք սորվելու, որ սոպռ և տգէտ չը մնանք։

Գ. Պէտք է որ՝ չը մոռանանք վարժապետին երախտիքը, և ընծայիւք և շնորհ

հակալուծ ըստ կարի հատուցում ընենք անոր աշխատանքին, որ մեր վրայ աշխատեցաւ։ Եւ յիրաւի կրթութիւնը և ուսումը՝ որ կը տրվինք վարժապետէն, համաչափ գին չունի. ապա մեր վճարքը՝ որ փոխարէն կը հատուցանենք, միայն երախտագէտ կընեն զմեզ. վասն զի ապերախտութիւնը մեծ չար է. ուստի կըսէ առաքեալն. * Հաղորդուի արասցէ աշակերտն վարդապետին յամենայն բարութիւնս։ || Գաղ. Զ. 6։

Զ. Պէտք է որ չը տրտմինք, երբ մեր պակասութիւնը համար մեզի կը սաստէ և կը յանդիմանէ. և չը կարծենք թէ մեզի ատելօղ է. այլ պիտի ճանչնանք, թէ աւելի գութ և սէր ունի մեր վրայ, և մեր աղէկութիւն համար ջանացօղ է. վասն զի ինչպէս արիստոտել կըսէ. || Հայրենիք նիս մեր ըլլալուն պատճառ են, իսկ վարժապետնիս բարի ըլլալնեերուս ||։ Ապա ինչ կերպով ուսման վարժապետի հետ կենցաղավարիլ պէտք է, անոր պէս ալ մարմնաւոր արհեստ տրվը ցընօղ վարպետի հետ վարվելու է։ Ուստի պէտք է որ վարպետի երախտիքը չը մոռնանք.

հօր պէս պատուենք. հնազանդութիւն ընենք. խրատին ականջ դնենք. չը վշտացընենք. և եթէ կարօտութիւն մը ունի նէ, ջանք ընենք լեցընել կամ թեթևցընել։

ԳԼ. Ի։

Կանոն էզբօր հէպ հէնցաղաձարոնէ։

ա. Պէտք է եղբարց, որ միշտ ներքին և ճշմարիտ սիրով մեկըզմեկ սիրեն. նախանձ, ատելութիւն, և ոխակալութիւն ամենևին չունենան. վասն զի ինչպէս մի և նոյն ծնողքէ ունին իրէնց մարմինը, նոյնպէս մեկ հոգի և մեկ սիրտ պիտի ունենան։

բ. Պէտք է որ՝ փոխադարձ բարեբարութիւն ընեն. և ամէն ժամանակ և ամէն գործի մէջ միմեանց օգնական և թիկունք ըլլան. ուստի կըսէ խմաստունը. * Եղբայր յեղբօրէ օգնեալ՝ իբրև զքաղաք ամուր։ || ՍՍՍԱՀ. ԺԸ. 19։

գ. Պէտք է որ՝ ներող և գթած ըլլան միմեանց. եթէ պատահի որ բանի մը համար մեկըզմեկ վշտացընեն, շուտը պիտի

նելուն. վասն զի ամենայնին օրինաց և քնուն ընդդէմ է, որ հարազատ եղբայրք զմի-մեանս ատեն և մերժեն։

Դ. Այլ՛ եթէ յօժարին և ջանան՝ որ մեկ տեղ մեկ տան մէջ քնակին. և ոչինչ և անոտի պատճառի համար մեկ տունէ չը բաժնըվին։ Ա՝ զի անով ոչ թէ միայն եղբայրական սիրոյ նըվազութի կը լայ, այլ և զուր տեղը ծախքերնին կը շատ-նայ. և այս ոչ սակաւ պնաս է. որ եր-բեմն տընավերուի և կործանումա՛լ կը պատճառէ. ինչպէս տէրն մեր կըսէ. * Զ՝մենայն քաղաք կամ տուն բաժա-նեալ յանձն իւր՝ ոչ կացցէ։ ||Մատ. ԺԲ. 25։ Ուստի մեկ տան մէջ քնակելը խիստ օգտակար է և բարի. ինչպէս կըսէ դաւիթ մարգարէն. * Զ՝Ո՞ի բարի կամ զի՞ վայելուչ, զի քնակին եղբարք՝ ի միա սին։ ||սաղ. ՃԼԳ։

Ընդհանուր հետ կենցաղավարելու կերպը՝ կը սորվըցընէ մեզի տղգտկանի հետ կեն ցաղավարելու եղանակը. ուստի ալ՛ոք է որ միմեանց սիրող, օգնական, և նեղող ըլլան։

ԳԼ. ԻԱ։

Լանոն բարեկամի հետ հենցաղավարուելոյ։

Ա. Պէտք է որ՝ խոհեմ անձինքը մեղի բարեկամ ընտրենք. և ոչ թէ անխոհեմը։ և ինչէ մարդու հետ անխորհրդաբար ընտանութիւն և բարեկամութիւն ունենք։

Այս որովհետև բարեկամը՝ մեր հետ մեկ հոգի կը սեպուի՝ որ երկու մարմնոց մէջ բնակեալ է. ապա դիւրաւորին դիպ վածոց մէջը կը հարկաւորիմք ծածուկ խորհուրդնիս միմեանց յայտնել, և օգտակար խրատ առնուլ։ Ուստի թէ ըստացեալ բարեկամնիս անխոհեմ և տգէտ ըլլայ, ոչ թէ չար կամօք՝ այլ անհմտութիւն մեր խորհուրդը այլոց կիմացընէ. վասն զի բանորսակնեերը՝ անփորձ և անհմուտ մարդկանց բերնէն՝ սրտին մէջը եղած գաղտնիքը անանկ կը գողնան, որ անոնք չեն իմանար. և ասկէց շատ կերպ ինասներ կրնան ծնանիլ. նաև տրված խրատներն ալ շատ անգամ կրնայ ըլլալ անպէտ կամ ինասակար։

Այս խոհեմ և փորձառու մարդ բարեկամ ընտրելու է, որ օգտակար խրատ

տալ գիտնայ, և լուսած խորհուրդն ալ սրտին մէջը պահէ և չը յայտնէ։

Ճ. Պէտք է որ հեզ և քաղցր ըլլայ. վասն զի եթէ անհանդարտ և բարկասիրտ ըլլայ, և բարեկամին պակասութիւնը չը տանի, սէրը և բարեկամութիւնը կը քակվի. և կարելի է որ այնուհետև միմեանց ատեցող և թշնամի ըլլան։

Ա՛յլ պէտք է որ հեզ ըլլայ, և բարեկամին պակասութիւնը տանի. և եթէ զայրացընէ զինքը՝ տակաւին համբերութիւն ընէ, և սիրելուիը չը քակէ։ Այսպէս զի ինչպէս իմաստունքը կըսեն, դժվարին է՝ մանաւանդ թէ անկարելի, անանկ մարդմը գըտնըվիլ աշխարհի մէջ, որ ամենևին կատարեալ ըլլայ, և բնաւ պակասութիւն մը չունենայ։

Ճ. Պէտք է որ բարեսիրտ ըլլայ. վասն զի եթէ անձնասէր՝ շահասէր՝ և օգտաբխընդիր ըլլայ, միայն իր առանձնական շահը կը նայի, և ոչ երբէք իր բարեկամին օգուտը. ապա երբ իր շահը կը կըտրի, իսկոյն բարեկամուին ալ կը վերջանայ. և ասանկ բարեկամուիը փուռ է, և շատ անգամ ճեղասակար ալ կըլլայ։

Դ. Պէտք է որ՝ ընտրած բարեկամնիս հաճեսա և առաքինի ըլլայ. վասն զի եթէ վատ և մոլի ըլլայ, անոր հետ ընտանութիւն ընելով՝ մենքալ վատահամբաւ կըլլանք։ Որովհետև հասարակութիւնը լաւ մարդ կը սեպէ զայն, որ բարեպաշտ և աղէկ անձանց հետ ընտանութիւն և բարեկամութիւն կընէ. իսկ վատ մարդ կը համարի զայն, որ սովորաբար գէշի հետ սէր ունի, և կենակցութիւն կընէ. ուստի կը գրէ նոր առաքեալը. * Պատուիրեմ ձեզ Եղբարք յանուն Տն մերոյ Յի.քի, խորշել ձեզ յամէն եղբօրէ՝ որ ատուհական գնայցէն։ || Բ. Ընդհան. Դ. 6։

Ե. Պէտք է որ հաւատարիմ ըլլայ. վասն զի ժամանակի բարեկամը՝ քանի որ բարեբաղդութիւնն և յաջողութիւն մէջ ենք՝ մեզի ճշմարիտ և սրտակից բարեկամ կը ձևանայ. այլ աշխարհիս անհրաժարելի արկածովը՝ եթէ քիչ մը նեղութիւն հանդիպիմք, իսկոյն տեսութիւնը կը կըտրէ, և մեզի կը մոռնայ, և որպէս թէ ամենևին անծանօթ մեկ մը կըլլայ։

Իսկ հաւատարիմ բարեկամը՝ նեղ օրը մեզի օգնութիւն կը հասնի թէ խորհրդով

թէ խօսքով թէ դրամով թէ աշխատու-
թիւն՝ ձեռքէն եկած բարերարութիւնը կընէ.
և սատանկը պէտք է որ բարեկամ ըստա-
նամք. բայց խիստ դժվար է գտնալ։

Ղ. Պէ՛տք է որ անկեղծ ըլլայ, իր բա-
րեկամին պակասութիւնը մեերմաբար ազդէ
և զգուշացընէ։ Ա՞ն զի կեղծաւոր և
մարդալոյզը՝ կերպ կերպ շողոքորդութիւն
իր բարեկամին ամէն խօսքը և գործքը
կը գովէ՝ մինչև պակասութիւնը ևս, որ չըլ-
լայ թէ սեղանէն զինս հեռացընէ։ Ան-
թէպէտ ինքն գիտէ որ իր ըսածներըս
սուտ է. բայց ինչ օգուտ որ դիմացինը
կը հաւատայ։ Ան սատանկ բարեկամ խիստ
շատ են, և շատ տեղ կը գըտնըվին. ոըք
և իսկական անվամբ պատատուքաղ կը
կոչվին. (ՅԻ ՀԱՆԱԽ ԵԱՀԱՅԸՃԷ)։ Ան սա-
սանկ ներէն զգուշանալ յիրաւի յոյժ
դըժվարին է։

Որ սիրէ զկիրսատ՝ սիրէ զկամասու-
թիւն . իսկ որ ատէայ զյանդիմա-
նութիւն՝ անմիտ է։ || ՍՈՍԻ . ԺԷ . Ի։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒԹԻՒՆՔ

Պարզ բնական բաղձանք մը ունի հանդիսատ և երջանիկ ըլլալու։ և ինչպէս ամէն այս բաղձանքը տրուեր է, այնպէս ալ իր բաղձանքին հասնելու միջոցները և ճանապարհը անոր բնութիւնը մէջ խակլեանն է տրպաւորուեր է։ որ թէ այս միջոցները յօժարութիւն ի դորձ դնէ, առանց կարծեաց իր վախճանին կը հասնի։ և քիչ աշխատանքով մեծ վարձուց կը տիրանայ։ Այս այս միջոցները՝ որ ի միջասահմանուն կը կոչեանան, վայելուչ անուամբ Պատքինութիւն կը կոչուին։ որ արիութիւն և քաջութիւն ասել է։ Ուստի Պատքինութիւնը բարի ջանք մի է, որով մարդս քաջութիւն կը բարեկարգէ իր կիրքը, բաղձանքը, և վարմունքը՝ բոլոր կենցաղավարութիւնը

մէջ, և անձին և ընկերին օգտակար եղածները կընէ ||։

Այս զայս առաքինութիւն կամ քաջութիւն ջանքը՝ որ ամէն բարեգործութիւն հիմը (ԸՆԴԵՆ) է, անխափան 'ի գործ դնել մեզի միշտ կը պատուիրեն, կը խրատեն, կը յորդորեն՝ քի աւետարանը, նոր առաքելքը, մարգարէքը, այլ եկեղեցին, նոր վարդապետները, և բարոյական իմաստասէրները։ Ապ ղէ բարքերնիս և վարմունքնիս ուղղենք, ամէն անպատշաճ և չար և վնասակար բաներից և գործոց հեռի կենանք, և պատշաճաւորն և բարին և օգտակարն խօսինք և գործենք։

Այսանկ առաքինութիւնները շատ են, բայց մենք համառօտութիւն համար անոնցմէ մէկ քանին հոս ծաղկաքաղ ըրինք։ որոնք ոչ թէ միայն դիպարատան տղայոց՝ այլ և չափահասներուն ալ հարկաւոր են և պիտանի։

ԳԼ. Ա.

Ա-ՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ։

Ասումնասիրութիւն ջանք մի է, որով ժրութիւն հետևողները՝ աստուածային և մարդկային գիտութեանց վերահասու կըլլան։

Գիտուն կըսվին, երբ ուսումնական բաներու տեղեակ կըլլան, այսինքն՝ Բերականութիւն, Աստուածանութիւն, Բժշկանութիւն, և Փիլիսոփայութիւն. որ հասարակ անուամբ ||Աստուածաբանութիւն|| կը կոչվին. ասոնց սորվիլը ամէն աշխարհականաց և եկեղեցականաց կը պատշաճի։

Իմաստուն կըսվին, երբ աստուածային բարակ բաներու հմուտ կըլլան, այսինքն՝ հրեշտակաց էութիւնը, հոգւոյն կարողութիւնը, աստուածային անձառելի կատարելութիւնը, և այլ գերբնական բաներու որ ամէնը մեկ անուամբ ||Աստուածաբանութիւն|| կը կոչվի. ասոնց սորվիլը եկեղեցականաց կը պատշաճի։

Ա. Ասումնասիրութեան հետևողին պէտք է, որ դաս առած ատենը միտքը վրան պահէ, ապիս անդին չը ցընդէ, և ախորժակօք ուշադիր ըլլայ։ Ա՝ զի

մարդուս խելքը ուր տեղ է նէ , ինքն
ալ հոն կը սեպվի • ուստի եթէ տղայ մը
դպրատան մէջը դաս առնէ , և խելքը
ուրիշ տեղ պրտրտի • մարմինը միայն դրպ
րատան մէջ է , և ոչ թէ ինքը • ականջը
կը լսէ , միտքը չը լսեր • անոր համար
ոմանք տղայք շատ ժամանակ դաս կառ
նեն , և բան չեն սորվիր ։

Բ • Պէտք է որ իրիկունները տան մէջ՝
դաս առածները միւսանգամ կարդայ ,
և անոնց վրայ որոնայ • և աղէկ չը հասկը
ցածները՝ միւս օրը դայ վարժապետին
հարցընէ և տեղեկանայ ։

Գ • Երբ ծառայական արհեստի կամ
առուտուրի մէջ մտնայ , պէտք է որ կար
դալը գրելը ձեռքէ չը ձգէ • որ սորված
ները մտքին մէջը հաստատի և աճի • ոչ
ղի՝ թէ վարժապետին և թէ իր աշխա
տանքը դատարկ չելլայ ։

Դ • Երբ կարդալը՝ պէտք է որ իրէնց
մէկ ղրվարձալի զբօսանք մը համարին •
և մինակ եղած ատենին անով զբաղին
(էյլէնմիշ ըլլան) • և ընդունայն խաղե
րով (օյիններով) ժամանակը զուր տե
ղը չը կորսընցընեն ։

Ուսումնասիրութիւնը անանկ ազնիւ և պատվական առաքինութիւն է, որ ուսաՀնողը ամէն մարդու սիրելի կընէ։
Ա՛ն զի գիտունը՝ թէ Հասարակ մարդու զաւակ է, տակաւին անոր վրայ ազնիվութիւն մը կերևի. իսկ եթէ մեծի զաւակ է, աւելի պայծառութիւն մը կը փայլի։
Ուստի ուսումնականք ո՛ր ազգի մէջ իսկզբանէ անտի առաւել ծաղկեր են, թէ իրէնք և թէ իրէնց ազգը երևելի և Հռչակաւոր՝ և այլոց ազգաց սիրելի և արգոյ ըրեր են։
Ուրեմն պէ՛տք է բարեջան մանկանց գիտուն Հեռևօղ ըլլալ և սորվիլ՝ իրէնց մտքին կարողութիւնը որչափ կը զօրէ, կամ իրէնց քաղաքական վիճակը որչափ կը նեղէ, և ուսման պարապելու ժամանակ կու տայ. ոչ զի ազնիվականի պէս յաղթութիւն ունենան, և ամենեցուն սիրելի ըլլան. և ազգօգուտ աշխատութիւն իրէնց Հայրենիքը փառաւոր և բարեՀամբաւ ընեն։

ԳԼ. Բ։

Աշխատասէրութեան։

Աշխատասէրութիւն ջանք մի է, որով մարդս իր վիճակին հարկաւոր և վայելուչը ընելու կը հետևի։ Ա՛ռ զի մարդս ծըներ է աշխատանքի համար. ինչպէս ճանաչ ըռաւ մեր նախահօրը. ||Պ՚ըտամ՚ք երեսաց քոց կերիցես զհաց քո||։

Աշխատութիւն՝ շատ օգուտ և շահ ունի մարդուս կեանքին և ապրուստին և բոլոր կենցաղավարութիւն, եթէ խոհեմութի՚ գործ ածենք, և զուր տեղը չը կորսընցընենք։

Ա. Մարդս՝ աշխատանքով կը ընայ սորվիլ իրէն հարկաւոր եղած կրթութիւնը՝ տրհեստը, և գիտութիւնը. ապա ո՛վ որ աշխատանքէ փոխչի և ծուլութի սիրէ, այնպիսին՚ի հարկէ կոպիտ և տգէտ կը մնայ, և կերպ կերպ թըշվառութեան և կարօտութե՛ մէջ կ՚ընայ։

Բ. Աշխատանքով մարդս աղատ կը մնայ այն ախտերէն և հիվանդութիններէն, որ ծուլութէ յառաջ կու գան. և մարմինը՝ առողջ ուժեղ և զօրաւոր կը

պահէ։ Ա՛ն զի ծոյլը՝ կը գործէ ձանձ
բանալով՝ պարապ նստելով՝ իր օրը շատ
ժամանակ քնով կանցընէ. որով ջղերը
(ինիրները) կը թուլնան և կը տկարա-
նան, և մարմինը իր բնական ուժը կը
կորսընցընէ. ախորժակն ալ (էշտահնալ)
կը գոցվի, կերածին համը չառնէր, և չը
կրնար մարսել. որով զանազան ախտե-
րու կը տիրանայ, և վատառողջ կը լլայ։

Գ. Աշխատանքով՝ մարդս ինչ վիճակի
և պաշտօնի մէջ ըլլայ իր ապրուստը կը-
նայ շահիլ, և հարկաւոր պիտոյքը հո-
գալու համար չանձրկիր։ Իսկ ծոյլը
աշխատանքէ փախչելով՝ իր յաջողութիւն
և վաստակի ժամանակը անմտութիւն ձեռքէ
կը հանէ. և երբ աղքատութիւն և նեղութիւն
մէջ կիյնայ, կափսոսայ և կը փընտրուէ,
բայց ինչ օգուտ որ՝ զուր տեղը կը ջա-
նայ, և չը կրնար գտնալ։ Ա՛ն զի դի-
պուկ ատենը (ֆըռսանթը) որ անգամ
մը ձեռքէ ելլայ, մեկնալ ձեռք չկիյնար.
ուստի կրսկրսի անարժան միջոցներով
իր կարօտութիւնը լեցընել, ՝ի գողութիւն,
սուտ վկայութիւն, մատնութիւն, և այլն։
Ուստի կը գրէ իմաստունը. * Ի կարօ-

տուլթեն է ամ վատ, ձեռք ժրաց 'ի դարը մանս։ || առակ. ԺԳ. 4։

Դ. Աշխատանքով մարդս ոչ միայն սասանկ չարիքներէն հեռի կը մնայ, այլ և շատ կերպ մարդերէ ազատ կը գըտնվի։ Իսկ ծոյլը դատարկութեան մէջ ըլլալով որկրամոլութեան և արբեցութեան և այլ սասնցմէ յառաջ եկած մոլութեցը կը հեռանի և կը վատթարանայ. որ թէ գործոյ մէջ գըտնըվէր և աշխատէր, սասանկ մոլի և սխատաւոր չէր ըլլար։ Ուստի կըսէ ովիդիոս. * Եթէ բարձցես զդատարկութիւն, խորտակի աղէրն ցանկութեն ||։

Տես ապա, թէ քանի՛ չար և վնասակար է ծուլութիւն, որ ամէն կերպ մոլութեան և թըշվառութեան մէջ կը ձգէ զմարդը։ Որովհետև ծոյլը եթէ հարուստ է՝ և հայրենի ժառանգութեան տէր, ցաւագար կըլլայ. եթէ արհեստաւոր է, աղքատութեան մէջ կիյնայ. եթէ ապաստաւոր, անգործ և կարօտ կը մնայ։ Ապա յոյժ պիտանի և օգտակար է մարդուս կեցութեան՝ բարեջան և աշխատասէր ըլլալ. միշտ մոքի մէջը անմոռաց ունենալով այն ի մասուն խրատը աղեկանդր մակեդոնացոց

նացոյն որ կըսէ։ * Ի կիր առնուլ պարտ
է զժամանակն ||։

ԳԼ. Գ։

Ճշմարտախօսութիւն։

Ճշմարտախօսութիւնը՝ սրտի և լեզուի համաձայնութիւն է. ուստի Ճշմարտախօսն կըսուի, որուն սիրտը ինչ է նէ, բերանն ալ նոյնը կը խօսի։ Այս առաքինութիւնը խիստ հարկաւոր է մարդուս բոլոր կենցաղավարութեան մէջ. որով ամէն տեղ՝ ամէն մարդու սիրելի կը լայ։

Ա. Ան զի Ճշմարտախօս մարդուն ըսածին ամէնքը կը հաւատան, երկբայութիւն և կասկածանք չեն ըներ. անոր խօսքին ոչ երդում պէտք է և ոչ վկայ. բաւական է իր մէկ անգամ ըսելը, թէ աս բանը ասանկ է, կամ ասանկ չէ. և ինչ բան որ սրտախօսը հապար երդումով չը կրնար հաւատացընել, ասոր մէկ խօսքովը կը հաւատան։

Բ. Ճշմարտախօսը՝ ամէն մարդու

քով վարկումունի. վասն զի միտքը այլ՝ և խօսքը այլ չէ. ճշմարտութիւնը չը խանգարէր սրտով. եթէ բանի մը խօսք տայ և վրան ունէ, եւ չը դառնար չը փոխվիր, հաստատուն կը կենայ. ամէն բանի մէջ ըստուգութիւն և հաւատարմութիւն կը պահէ։

Դ. Ճշմարտախօսը՝ ամէն մարդ կու զէ իրէն բարեկամ ըստանալ, և անոր հետ կենցաղավարիլ. վասն զի իր օգտին համար բարեկամին երբեսպաշտութիւն չընէր. այլ միշտ առանց աչառութիւնէ և կեղծաւորութիւնէ ճշմարիտը կը խօսի։ Այսպէս ալ որ 'ի տղայութէ ճշմարիտ խօսիլ իրէն սովորութիւն կընէ, մեծութիւնէ առեննալ նոյնպէս ճշմարտախօս, հաստատ, և հաւատարիմ կըլլայ, և ամենուն քով վարկում և պատիւ կունենայ։

Դ. Դայց որովհետև ճշմարտախօսը՝ ամէն տեսուն ըրած մարդը իրէն պէս հաւատարիմ կը կարծէ, և սրտին բոլոր խորհուրդը և գիտցածը կը պատմէ. ուրիշէց շատ կերպով վնասներ թէ իրէն և թէ այլոց կրընայ ծնանիլ. անոր համար պէտք է ճշմարտախօսին խոհեմ և զգու-

շաւոր ըլլալ։ ոչ զի միշտ ճշմարիտ ըլլայ
իր խօսածը, ինչպէս ուրն մեր կը պատ-
վիրէ։ * Բայլ էղիցի ձեր բան, այոն՝
այո, և ոչն՝ ոչ։ || Մատ. Է. 37։
Բայց ամէն գիտցած ճշմարտութիւնը չը
խօսի իւրաքանչիւր մարդու։

Ա՛ զի իր տեսնելիաձնեերուն մէջը՝ կա-
րելի է թէ գէջանելի նենգաւոր մարդ
մը, որոյ լեզուն արդար է և սիրտը չար,
ըստ հասարակաց առածին։ և անանկէն
զգուշանալ պէտք է։ ուստի կըսէ ալ
յովհաննէս աւետարանիչը։ * Ո՛վ սիր
հոգւոյ հաւատայք, այլ ընտրեցէք զհո-
գիսն եթէ յԱստուծոյ իցեն։ || Ա։ Յովհ. Դ. 1։

ԳԼ. Դ։

Խոնարհութիւն։

Ա։ Խոնարհութիւնը առաքինութիւն մը է,
որով մարդս ինքիր զինքը կը ճանչնայ։
Ընոր համար է որ՝ խոնարհը իր գի-
տութիւնը, խոհեմութիւնը, յաջողութիւնը,
և այլ հոգևոր և մարմնաւոր բարեացը
վրայ չը պարծիր։ և երբ ուրիշները զինքը

կը դուքեն կամ կը պատուեն , բնաւ չը
բարձրամտիր . այլ մանաւանդ իր պակա
սութիւնները միտքը բերելով՝ զինքը ա-
նարժան կը համարի այն պատուոյն և գո-
վութեան։ Ա՛ զի մտքին մէջը անմուռաց
ունի՝ եթէ առաքելոյն պատուէրը որ կըսէ.
* Ո՛վ ամբարտաւանէք՝ այլ ընդ խո-
նարհս զիջանիցիք . մի՛ լինիք իմաստունք
յանձինս ձեր։ || հռովմ. ԺԲ. 16։
Զսոր ներհակ՝ հպարտը ան է , որ ինքիր
զինքը չը ճանչնար . անոր համար մտքին
մէջը միշտ զինքը մեծ և արժանի պատ-
ուոյ դրրեր է . և զայլ ամենքը քան զինքը
անարդ և նըվաստ կը համարի։

Բ. Խոնարհը՝ երբ դժուարին գործի
մը ձեռք զարնելու ըլլայ , իմաստուն և
փորձառու մարդկանց խորհուրդ կը հար-
ցընէ . ուրիշ խրատ առնուլ ամօթ չը
համարիր , միտքը բերելով այն իմաստուն
և ճշմարիտ առածը , թէ * Հաղուստ ինչ
տեսանեն աչք՝ քան զակն || . անոր համար
ամենն դժուարին գան՝ դիւրին կերպիւ
և յաջողութեամբ դլուխ կը հանէ։

Իսկ հպարտը այնպէս կը կարծէ , թէ
քան զինքն խելացի մարդ չը գըտնուիր նաշ

խարհիս վրայ. ուրիշները անմիտ կը հա-
մարի և վար կը զարնէ. մեկի մը հետ խոր
հրդակցութիւն չընէր. անոր համար շատ
անգամ իր գործը յառաջ չերթար, և
ինաս կը կրէ։

Դ. Խոնարհը երբ կը տեսնայ, թէ
մեկը յանկարծ փորձանքի մէջ է ինկեր,
ցաւակից ըլլալով կըսէ, թէ ափսոս եղև
մարդուն, ժամանակին բերմունքը ըրին։
Իսկ հպարտը բնաւ մոքէն չանցընէր,
թէ դժբաղդուն է հանդիպէր, այլ կը
ասէ թէ բանը չէ գիտցեր, իր խելքովն է
ըրեր։ Ա՛ռ զի հպարտը միայն իր ըրածին
կը հաւանի, և ուրիշները կը քամահրէ։

Դ. Խոնարհը՝ միշտ զինքը պակասա-
ւոր կը ճանչնայ, և խոհեմ և առաքինի
ըլլալ կը ջանայ. անոր համար իր բարքը
և վարմունքը օր ըստ օրէ կը շտկէ։
Իսկ հպարտը իր պակասութիւնները բնաւ
չը տեսնար. այլ այնպէս զինքը կը կար-
ծէ, թէ արդէն կատարեալ առաքինի է.
անոր համար իր մոլորութիւնները՝ իրէն
սովորութիւն և որպէս թէ երկրորդ բը-
նութիւն կը լլան. և ինքն միշտ խակ և
թիւր և անուղղայ կը մնայ։

Ե. Խոնարհն՝ եթէ ազգօգուտ և ար ժանի պատվոյ գործ մը ընէ, չընայիր որ հասարակութիւնը զինքը պատվէ. վասն զի անանկ է դրբեր մարդին մէջը, թէ իր ճարտարութիւնը կամ գործունէութիւնը չըրաւ այն բանը, այլ՝ զօրութիւն և յաջողութիւնը։ Իսկ հպարտը՝ թէ և հասարակաց օգուտ բան մը չընէ, միշտ իրէն պատիւ և մեծարանք կը խնդրէ. վասն զի այնպէս կը կարծէ, թէ ամէն մարդ պարտական է զինքը պատվելու։

Եւ թէ մեկը իր ուզածին չափ պատիւ չընէ՝ կը խոժոռի, և բարեկամութիւնը թըշնամութիւն կը փոխէ. և կըլլայ որ՝ ինքս ալ կը հասցընէ։

Զ. Դայց որչափ հպարտը պատվել կուզէ, պատիվնալ այնքան իրմէ հեռի կը փախչի. իսկ խոնարհն որչափ պատիւ չը փընտրուէր, այնչափ առաւել պատիւ կը գրանայ։ Աստի իմաստուններըը՝ պատիվը նմանցուցեր են մեր մարմնոյ շուքին, որ երբ արևին դէմը կանգնինք նէ կը գոյանայ. որուն հասնելու համար որչափ ետևէն վազէնք, մեզմէ կը փախչի, չենք կրնար հասնիլ. բայց թէ ան-

կէց փախչելու ըլլանք, ան մեր եռևէն կուգայ, մեզնէ չը զատվիր։

Պատիվը՝ առաքինութիւն վարձքն է. առաքինի մարդը անպատիւ մնալ հնար չէ։ Գ. յն մեծատունը՝ որ աղքատը կընայի և կուրախացընէ, այն խելացին՝ որ ռամիկը խոհեմութիւն կը կառավարէ, և այլ ամէն մարդ՝ որ իր բարքը և վարքը բարեկարգած է, և իր պաշտօնին պարտքը կը կատարէ, այնպիսին որչափ պատիվն փախչի, տակաւին իր աստիճանին վայելուչ եղած պատիվը իր եռևէն կը վազէ, և գովելի կըլլայ։

ԳԼ. Ե։

Համբերութիւն։

Համբերութիւնը ջանք մի է, որով ամէն ձախորդութիւն և դրժվարութիւն խաղաղ սրտով կը դիմանանք, և չենք տրտընջար։

ա. Պէտք է որ՝ միշտ մտքերուս մէջը ունենանք, թէ ինչպէս ծովը առանց ալեկոծութիւն, և երկինքը առանց ամպի, և բարձրը լեռները առանց մշուշի չեն

կը մնար մնալ. ասոր պէս ալ աշխարհս ա-
ռանց փորձանքի և խռովութիւն չը մնար։
Ա՛ն զի երբ խաղաղ և հանդարտ կը տես-
նաս, մոքէ չանցած դիպված մը և նե-
ղութիւն մը յանկարծ կը պատահի, և
տակնուվրայ կընէ մեր հանգըստութիւնը.
որ թէ առանց տրտնջելոյ համբերենք,
այն սաստիկ նեղութիւնը կը թեթևնայ,
և տանելի կը լլայ։ Ապա եթէ նեղսըը-
տինք և տրտնջանք, աւելի մեր վրայ
կը ծանրանայ և անտանելի կը լլայ. և մեր
սիրտը և հոգին կը մաշէ։

Ը. Պէտք է որ՝ նեղութեան ատենը մտա-
քերնիս բերենք, թէ աշխարհս փոփոխա-
կան է, ժամանակը մեկ կերպ չը մնար.
ինչպէս յաջողութիւնը՝ ձախորդութիւն կը
փոխվի, ասոր պէս ալ ձախորդութիւն է-
ուէն յաջողութիւն կուգայ։ Ապա եթէ
ձախորդութիւն չը գիմանանք, մոմրտու-
թիւն մեր անձը ձեռքէ հանենք. երբ ժա-
մանակը փոխվի յաջողութիւն գառնայ,
անկէց մեզի ինչ օգուտ, երբ մենք աշ-
խարքէ ելերենք։ Ուրեմն սրտերնիս հան-
գիստ պահենք, մեր կեանքին մնաս չը
բերենք, որ այն յաջողութիւնը վայելենք։

Ը. Պէտք է որ մարդերնիս ամիսուն պա-
հէնք, չը վրդովենք, չը թունենանք, եթէ
ժամանակին բերմունքէն դրժվարութիւն
մը մեզի պատահի. ոչ զի ճար մը և հնար
մը մտածենք և գտնանք, որ այն նեղու-
թիւն ազատինք, և կամ մեզնէ թեթևցը
նենք։ Այլա թէ խելքերնիս գլուխնիս
չը լայ, ոչ թէ միայն ազատուիլ ճար մը
չենք կրնար գտնալ, այլ և աւելի դրժ
վարութիւն մէջ մեզի կը ձգենք։

Ը. Համբերօղը՝ ամէն տեղ իր համ-
բերութիւն օգուտը կը վայելէ։ Այ՝ զի
երբ գործ մը ընել կամենայ, անհամբեր
մարդու նման խսկոյն չը սկսիր. այլ նախ
և առաջ՝ գործոյն վախճանը և միջոցները
կը դիտէ. և ասալ հերիք չը սեպեր, այլ
կը մտածէ զանոնք ալ, որ գործը աւար-
տելէն յետոյ կրնան պատահիլ. և ասոնց
ամէնը աղէկ մը կը կարգադրէ, և ապա
գործոյն ձեռք կը զարնէ։

Այ՝ եթէ գործոյն մէջը կամ վերջը
դրժվարին դիպվածմը պատահի, չը
շփոթիր, չանձրկիր. վա՜ զի ինքը զայն
յառաջմանէ մտածեր էր, և անոր ճարը
մտօքը պատրաստեր էր. ուստի այն դրժ

վարութիւն ձարը շուտով կը գտնայ, և իր
բրնաձ գործը դիւրին կերպիւ և յա-
ջողութիւն գլուխ կը հանէ։

Ե. Համբերողը՝ իր ընկերներուն միշտ
սիրելի է, և շատ անգամ զանոնք ամօթա
պարտ կընէ։ Ա՛ն զի կըլլայ որ բանով
մը անիրաւ տեղը զինքը կը վշտացընեն.
բայց ինքը չը խոժոռելով՝ և հեզութիւն
համբերելով՝ անանկ կը պարտաւորէ զա
նոնք, որ յետոյ իրենց ըրածին վրայ կը
ղղջան, և թողութիւն կը խնդրեն. և ա-
ւելի սիրով անոր հետ կը կապվին։
Իսկ թէ ինքը սխալմամբ իր ընկերը վշտա
ցընէ, իսկոյն ներում կը խնդրէ. և չը
թողուր որ բարեկամութիւն կապը քակվի։

Զ. Համբերութիւնը մարդս կրթեալ՝ դի
տուն՝ և արհեստագէտ կընէ. որով իր
բաւական տպրուստը կրնայ շահիլ, և բո
լոր կենացը մէջ կարօտութիւն չը քաշեր։
Ա՛ն զի մանկութիւն ատենը իր ուսուց-
չին կամ վարպետին յանդիմանութիւնը և
խրատին առանց տրտնջելոյ կը համբերէ,
և անոր սրտանց ծառայութիւն կընէ. որով
մեծութիւն ժամանակը աղէկ կըրթուի կու
նենայ, և արհեստագէտ կըլլայ. որով իր

պիտոյքը առանց դժվարութեան կը հոգայ։

Իսկ անհամբերը տղայն՝ իր կամքը չը կատարէր. երբ յանդիմանութի կամ կծու խօսք մը լսէ, կը ձգէ մեկ դի կելլայ, և կը մնայ կոշտ և անարհեստ։ Ուստի 'ի մեծութեան գործ և վաստակ չունենալով, զօրն 'ի բուն դատարկ կը շրջի. և կարօտութիւն և թշվառութիւն իր կեանքը կանցընէ։ Այսպէս պէտք է որ 'ի մանկութեան համբերութի ընենք. որ հարկաւոր եղածները սորվինք, և հանգիստ ապրինք։

ԳԼ. Զ։

Հնազանդութիւն։

Հնազանդութիւնը առաքինութի մի է, որով փոքրը իր յատուկ կամքը մեծին կամացը և հրամանին հպատակ կընէ. որով ամէն կարգի և օրէնքի տակ կը մնայ։

ա. Պէտք է տղայն, որ ծնողքին՝ վարժապետին՝ վարպետին հնազանդի, իր մեծին հրամանը կատարէ, խրատը ընդունէ, և խօսքէն դուրս չելլայ. և այսպէս անոնց աչքին հաճոյ կը լլայ, բան

կը սորվի, և օրէ օր յառաջ կուգայ։
Այսպէս թէ կամապաշտ և ինքնահաւան ըլ-
լայ, իր մեծին մտիկ չընէ, կամքին ու-
զածը ընէ. ոչ քաղաքավարութիւն կրնայ
սորվիլ, ոչ դիտութիւն կամ արհեստ, և ոչ
գործոյ մը յարմարութիւն կունենայ. այլ
ծոյլ և անպէտ մարդ մը կըլլայ։

Բ. Պարտականէ իւրաքանչիւր մարդ՝
որ հնազանդի ամ ՀԱՅԻՆ և մարդկայինն
օրինաց, և յօժարութիւն և սիրով կատա-
րէ որ ինչ կը հրամայեն։ Այս առ այս
ոչ միայն անհնազանդներուն համար դը-
վաճ պատիժներուն վախէն շարժելով,
որպէս զի ազատ մնայ և չը պատժի. այլ և
խղճմտանքին դըրդելուն համար, որ միշտ
կազդէ ներսէն, թէ օրինաց և հրաման-
ին մեծին պէտք է հնազանդիլ։
Ա՛ռ զի ՀԱՅ այս կարգը և սահմանը դը-
ըրէ. որ պղտիկը մեծին խոնարհի, ա-
նոր խրատը մտիկ ընէ, և պատուիրանքը
կատարէ։ Այսպա ՀԱՅԻՆ կարգադրութիւ-
հետևօղ հնազանդօղը, ոչ թէ միայն պա-
տիժ չը կրէ՝ որ օրէնքները կըպատուեն
անհնազանդներուն, այլ և իր վրայ հարկ
եղած պարտքը կը կատարէ։

Իսկ կամապաշտը՝ որ իր մեծին չը հնազանդիր, այլ մանաւանդ կը կամի՝ որ մեծը իրէն հնազանդի. այնպիսին ՅԾ-ային սահմանադրութիւնը և կարգը աւրել կուզէ. և յիրաւի արժանի կըլլայ այն պատիժներուն, որ օրինաց հնազանդութիւն չընողներուն համար դրուած է։

Ե. Օրինաց և հրամանի հնազանդութիւն ընողը, իր մեծին խնամքը և գը թութիւնը կը վայելէ. և անով իր վիճակին մէջը երջանիկ կըլլայ։ Ա՛ ղի օրէնքին վախճանը՝ օրինապահին օգուտը և երջանկութիւնն է։

Ա՛ ղի ՅԾ-ային կարգադրութիւնը, ոմանք ընուէր մեծ էն, ինչպէս ծնողք՝ իրէնց զաւակացը վրայ. ոմանք իշխանութիւն և կառավարութիւն, ինչպէս ՅԾ եկեղեցւոյ հովիվք՝ ժողովրդոց վրայ, և աշխարհի թագաւորք և քաղաքապետք՝ իրէնց հպատակաց վրայ. ոմանք երախտաւորութիւն, ինչպէս ուսուցիչք՝ և արհեստի վարպետք՝ իրէնց աշակերտացը վրայ. ոմանք բարերարութիւն, ինչպէս աղքատը և գթած իշխանք՝ հասարակութիւնը վրայ. ոմանք վարձատրութիւն, ինչպէս

տէրք՝ իրէնց ծառայից և սպասաւորաց
վրայ. ոմանք արժանապատուութիւն, ինչպէս
արք՝ իրէնց կանանց վրայ. ոմանք խոր-
հեմութիւն, ինչպէս փորձառու ծերք և
հանճարեղ խորհրդականք՝ անփորձ ե-
րիտասարդաց վրայ։

Ուրեմն պէտք է որ՝ զաւակը սրտի
մտօք հնազանդի ծնողքին. ժողովուր-
դը՝ իր հոգևոր հովուին. հպատակը՝ իր
թագաւորին և քաղաքապետին. աշակեր-
տը՝ իր ուսուցչին և վարպետին. հաստ-
րակուիրը՝ իր իշխանին. ծառայն և սպա-
սաւորը՝ իր տէրոջը. կինը՝ իր երկանը.
անփորձը՝ փորձառու խորհրդականին. և
այս հնազանդութիւնը շատ շահ և օգուտ
կունենան. և որչափ կարելի է՝ երջա-
նիկ կըլլան։

Դ. Հնազանդ եղողը՝ ամենն կերպ տ-
ղեկութիւն կունենայ. որով իր մեծին սի-
րելի կըլլայ, և արհամարհանք չը կրեր։
Ա՛ն զի իր խելքին աղէկ երևցածը՝ և
իր սրտին ուզածը չըներ. այլ որ ինչ իր
մեծը կը հրամայէ՝ միամիտ սրտով զայն
կը կատարէ, ինչպէս քա՛ն մեր պատ-
վիրեց, թէ աղաւնոյ պէս միամիտ եղէք։

Իսկ յանդուգը և կամակորը՝ իր մեծ անխելք կը համարի, անոր ըսածը չընէր, իր հաւնածը կընէ. անոր հոմար ուր տեղ որ գըտնըվի, ատելի կըլլայ և անար գուրթէ կը կրէ։ Այսպա խիստ հարկաւոր է տղայոց, հնազանդու�մէջ կրթըվիլ, որպէս զի սիրելի ըլլան իրէնց մեծին, և պատիւ գտնան։

ԳԼ. Է։

Խաղաղասիրութիւն։

Խաղաղասիրութիւնը ջանք մի է, որով մարդս ուրիշի հետ խաղաղութիւն կը վարվի, և այլոց մէջէն խռովութիւնը կը բառնայ, և կը հաշտեցընէ։

Ա. Խաղաղասէրը շատ անգամ այլոց կը յարմարէ զինքը. ուստի կը պատահի, որ երբեմն իր իրաւունքէն ետ կը կենայ, և ընկերին իրաւունք կու տայ, ուր տեղ որ մեղք չը կայ. ոչ զի հակառակութի մը չը ծագի, որ ընկերասիրութիւնը ինչասէ։

Իսկ խռովասէրը՝ բնաւ չուզէր հանդարտ կենալ. առանց իրաւանց՝ իրա-

ուունք կը պահանջէ. ոչ աղաչէս կը լսէ, և ոչ խրատ մոռիկ կընէ. ուր տեղ որ գլան նըվի՝ խռովութիւն մը կը հանէ։

Բ. Խաղաղասէրը՝ քաղցրաբարոյ և հեզ կըլլայ. եթէ վատ խօսք մը լսէ՝ որ մեկը զուր տեղը իր համար զուրցեր է, չը զայրանայր, անոր հետ չերթար կըռուվիր. այլ կը նայի, եթէ բամբասողը իր ծանօթն է, յարմար ժամանակի մը կըսպասէ՝ որ քաղցրութիւնէ խրատէ. բայց թէ անծանօթ է, ամենևին կը լռէ, և բամբասողին դէմ բամբասանք չըներ։

Խակ խռովասէրը՝ բարկացող կըլլայ և անհանդարտ. ընաւ դադար չը կենար. միշտ առիթ մը կը փընտրուէ՝ որ մեկի մը հետ հակառակի, և վրդովում հանէ։

Գ. Խաղաղասէրը՝ սակաւախօս կըլլայ, և ուր տեղ ըլլայ, մտածելով և զգուշանալով կը խօսի. վա՜ զի կը վախնայ, թէ չըլլայ որ սխալմամբ բերնէն բան մը հանէ, որ ընկերական սիրոյ վնաս բերէ։

Խակ խռովասէրը՝ շատախօս և անզգուշ կըլլայ, պիտանին և անպէտը չը նայիր, օգտակարը և վնասակարը չը զատէր. ինչ որ բերանը գայ՝ խակոյն կը խօսի. հոգ

չլնեը թէ խօսքս մեկին կը դիպչի , և մէջերնիս գժտութիւն կամ խռովութիւն կեց նայ • վա՜ղ խռովութիւնը՝ իրէն զբվարճուն առիթ մը և զբօսանք մը կու գայ ։

Դ • Խաղաղասէրը՝ միշտ իր բանին կը հետևի • խելքը միտքը իր գործոյն հետ է • անոր համար ինչ բանի որ ձեռք կը զարնէ՝ յառաջ կը տանի և կը շահի , և համբաւում (ենթիպար) կու նենայ ։

Դակ խռովասէրը՝ իր ամէն գործը ե՜ ռեսի վրայ կը ձգէ , հետաքրքիր ըլլալով ասդիս անդին կը պըտըտի , ուրիշներուն խօսքին և գործքին տեղեակ ըլլալու համար ։ Ոչ՝ ղի մեկին բերնէն խօսք մը որ սայ առնէ , իր կողմէն ալ սուտ իրաւ հետը խառնէ , իսկոյն ուրիշին ականջը հասցընէ • որ երկու ընկերի , կամ դրացնոյ , կամ բարեկամի մէջ , խռովութիւն և հակառակութիւն մը ելլայ ։

Ա՛ռ թէպէտ այն ատենը իր չար բաղձանացը կը հասնի • բայց շատ չանցած , խաղաղասէր մարդկանց ձեռքէ անոնք կը հաշտըվին , իր ըրած բանսարկութիւնը կը յայտնըվի • և ինքն երկու կողմին ալ ատելի կըլլայ , և իր գործնալ գէշի կերթայ ։

Ե. Եւ ասանկ քանասարկուի անկիրթ տղայի վրայ առաւել կերեւինայ. որ մեկէ մը թերակատար բան մը լսելով՝ աղէկ մը չը հասկըցած՝ կերթայ խսկոյն ծուռու մուռ ուրիշի կը պատմէ։ Լսողնալ դատարկ գըտվելով՝ անոր ըսածին կը հաւատայ. Ճշմարիտ համարելով ռամիկներուն առածը, թէ ||Խօսքը տղայէն առ||։

Եւ այս կերպիւ ըսողին և լսողին մէջ խռովութիւն մը կը ծնանի. և երբեմն այնքան կը զօրանայ և կը բորբոքի այս խռովութիւնը, որ քանի մը խաղաղարար մարդիկ մեկ տեղ գալով, դըժվարաւ կըրնան բառնալ, և խաղաղուի հասցատել. ինչպէս կըսէ հասարակաց առածը, թէ ||Խենթը քար մը հորը ձգեր է, և տասը խելացի հալիւ կըրցեր են հանել||։

Եւ որովհետև անկրթուէ յառաջ կուգայ ասանկ քսու և խառնակիչ ըլլալը տղայոց. որ երբեմն զանազան ինամներու և մեղաց պատճառ կըլլան։ Ունոր համար պէտք է որ տղայք 'ի մանկուէ կրթըվին, քաղաքավարութիւն սորվին, և կոշտ և անխրատ չը ծնան. ոչ զի 'ի մեծութէ բարեկարգ և խաղաղասէր ըլլան։

ԳԼ. Ը։

Պարկեշտութիւն։

Պարկեշտութիւնը ջանք մի է, որով մարդս իր բարքը և վարքը կը կարգաւորէ, և բարի անուն կունենայ։

Ա. Պարկեշտը՝ իր բոլոր վարմունքին մէջը չափաւորութիւն և վայելչութիւն կը պահէ, որպէս զի ամէն ուզածը չը կատարէ։

Ա՝ զի մարմնոյն կիրքը և բաղձանքը՝ մարքին իշխանութիւնը տակը ձգեր է. և ինքն ալ մտաց խորհրդովը կը կառավարվի. անոր համար իր կերակուրը, հագուստը, շրջելը, խօսիլը, և բոլոր շարժմունքը կանոնաւոր են և համեստ, և մարդկուն վայելուչ։ Ուստի կը խրատէ ՝ի առաքեալը՝ ասելով. * Ամենայն ինչ ձեր պարկեշտութ և ըստ կարգի լինիցի։ || Ա. Կորն. ԺԴ. 40։

Իսկ լերբը՝ թոյլ կու տայ անկարգ կիրքերուն և չար բաղձանքին որ մտացը իշխեն, և իրէնց ծառայեցընեն. և ինքնալ մարքին կառավարութէն գուրս կելլայ, և մարմնոյն կամքը կը պաշտէ. և այսպէս իր բոլոր վարմունքը կապականէ,

և մարդկութիւն չը վայլածնելը կընէ. ո-
րով գարշելի կըլլայ ամէնուն առջին։

Բ. Պարկեշտը ամօթխած կըլլայ և
պատկառօղ. անոր համար ամէն մոլուէ
և անարգ գործքերէ հեռի կը փախչի.
որ չըլլայ թէ չը վայլած բան մը ընէ,
և այլոց առջևը ամօթով ըլլայ։

Խակ լերբը՝ իր անձին բնաւ չըզգու-
շանար, արժանը և վայելուչը չընտրեր.
ամէն մոլութիւն կը գործէ և չը խրատնիր։

Գ. Պարկեշտը՝ եթէ պակասութիւն մը
ընէ, և իր մեծէն խրատ և յանդիմա-
նութիւն լսէ, որչափ ծանր և կծու ըլլայ
յանդիմանութիւնը, չը խոժոռիր. ուրախ
սրտով և յօժարութիւն կընդունի։ Ա՛ռ-
գիտէ, թէ իր շահուն համար է. և շնոր-
հակալ կըլլայ, որ զինքը սիրելուն համար
կը յանդիմանէ. և յետ այնորիկ զինքը
կուղղէ, և զգաստ և արթուն կը կենայ,
որ անդամմոլ պակասութիւն մէջ չիյնայ։

Խակ լերբը՝ եթէ իր անկարգութիւն հա-
մար յորդորանք մը կամ՝ խրատ մը լսէ,
մտօքը կը զայրանայ, և աւելի կը չարա-
նայ, և իր մոլութիւնը կը շատցընէ։

Դ. Պարկեշտը՝ ինչ խրատ լսէ իր մե-

ծէն, բոլորնալ օգտակար կը համարի ի-
րէն, թէ և անոնց օգտակար ըլլալը չը
գիտնայ։ Վա՜յ զի հաստատութիւն դըրեր
է մարդին մէջ, թէ իր մեծը՝ իրէն գէշ
ըլլալը չուզէր, աղէկ ըլլալը կուզէ. ա-
նոր համար պատվիրանքի պէս կընդու-
նի, և միտքը կը պահէ. և այն խրատ-
ներովը կը վարվի, և բարեկարգ և բա-
րեհամբաւ կը լայ։

Իսկ լերբը՝ իմ խրատս ծոցս է ըսե-
լով, խօսքին ականջ չը դներ, որ զգաս-
տանայ և զինքը բարեկարգէ. և ինչու
ականջ դնէ, որ բարեկարգ ըլլալ չը
կամիր։ անոր համար միշտ անխրատ և
մոլի և վատանուն կը մնայ։

Է. Պարկեշտը՝ կը ջանայ իր բարի ա-
նունը չը կորսընցընել. վա՜յ զի գիտէ՝ որ
եթէ անգամմը գէշ անուն հանէ, յոյժ
դժվարութիւն կըրնայ շըտկել, և բարե-
համբաւ ըլլալ. անոր համար մոլութիւն
միշտ կըզգուշանայ։ Իսկ թէ յանկարծ
սխալի, և իր պատվոյն չը վայլած բան մը
ընէ. կը տրտմի և կը ցաւի, թէ ինչու
ես այս բանը ըրի. և իսկոյն զինքը կուղ-
ղէ, որ չըլլայ թէ իր աղէկ անունը աղ

տոտուկ • վասն զի լաւ կը հասմարի իր մահը՝ քան թէ գէշ անուն ունենալ։

Իսկ լերբը՝ չը ցանկար մարդկուէ պատուիվը պահել՝ և անուն բարի ժառանգել • այլ անբան անասունի պէս՝ միայն ուտել և ապրիլ կընայի • և անկարգ վարմունքով զինքը վատանուն կընէ, և հոգ չընար • մանաւանդ թէ իրէն պարծանք մը կը հասմարի • որ յայտնի նշան է գեշութիւն մէջ մնալուն, և աղէկութիւն չը դառնալուն։

Ճ • Պարկեշտը՝ բարեհամբաւ ընկերացց հետ կը կենցաղավարի, որով ինքնալ բարեհամբաւ կը լայ • վասն զի կընայի թէ անոնք ինչ գործով բարի անվան տէր եղեր են • ինքնալ անոնց ըրածը կընէ, և աղէկ անուն կը ստանայ։

Իսկ լերբը իրէն նման անշահներուն հետ տեսնվելով, չը գիտցած չարութինալ կը սորվի, և աւելի ախտաւոր՝ մոլի՝ և չար կը լայ • և աղէկ անուն յաւիտեան չը կրնար ունենալ։

Ա. պա պէտք է, որ բարեմիտք տղայք՝ մոլի և վատանուն ընկերացց փախչին, և առաքինի և բարեհամբաւ եղողներուն

հետ կենցաղավարին. ոչ զի և իրէնք ա-
նոնց նման բարի և առաքինի ըլլան, 'ի
կենդանուէ և'ի մահու աղէկ անուն ժա-
ռանգեն, այլ և մարդկան սիրելի ըլլան։

Այսպէս ով բարեջան մանկունք եթէ
երջանկուէ կը փափագիք, ամէն ժամա-
նակ մտքերնիդ պահեցէք և կատարե-
ցէք նոր առաքելոյն այս խօսքը որ կըսէ.
* Այսուհետև եղբարք՝ որ ինչ ճշմար-
տութիւն է, որ ինչ պարկեշտութիւն, որ ինչ
արդարութիւն, որ ինչ սրբութիւն, որ ինչ
սիրով, որ ինչ համբաւ բարեաց, որ ինչ
քաջութիւն, որ ինչ գովութիւն, զայն խոր-
հիջիք . . . և ձեզ խաղաղութիւն եղիցի
ընդ ձեզ. ‖ Փիլիպ. Դ. 8։

ԳԼ. Թ։

Աղխանձաւորութիւն։

Աղխանձաւորութիւն ջանք մի է, որով
կը բաղձանք մեր նմանեացը աղէկութիւնը՝
որ մենք չունինք. և տաքութիւն մը կը
հետևինք՝ որ մենք ալ ըստանանք։

Ա. Ուստի ամէն կարգաւորեալ հա-

ատրակութիւն՝ այս բարի նախանձովը կըր
ցեր են ունենալ ոմանք աւելի և ոմանք
պակաս՝ օգտակար օրէնքներ, զանազան
գիտութիւններ, արհեստներ, բերք ու
բարիներ. ոչ թէ միայն մարդուս հար-
կաւոր եղածներըՀ՝ այլ և վայելչականնե
ըր. որով եղեր են ինչնանաւոր, հա-
րուստ, և հռչակաւոր։

Բ. Եթէ որովհետև առանձին մարդ մը՝
բնական բերմամբ չը կրնար ըլլալ միան
գամայն, կատարեալ առաքինի, կատար-
եալ գիտուն, և կատարեալ արհեստա-
գէտ։ Ա՝ ի զի թէպէտ բնութիւնը մայր
գթած է, բայց շուայլաբար և անչափо-
րէն չը բաշխեր իր պատվական բարիքը,
այլ չափով կուտայ ամէն մէկին, որ
ամէնքը միաբանութիւնՀ՝ հատարակաց օ-
գուտը յառաջ առնին։

Գ. Ասուի չէ տեսած անանկ մարդ
մը, որ անոր բոլոր գործարանները ա-
մենևին կատարեալ ըլլայ. որպէս զի մար-
մինը ըլլայ հսկայաձև ու զօրաւոր. աչ-
քը քաղցրահայեաց ու սրատես. ականջը
խիստ սուր. քիթը խիստ հոտա-
ռու. լեզուն պարզ և յստակ, և ամ-

մէն աղգի բարբառոյն յարմարաւոր։ ձայ
նը աղդու և անուշ։ ոտքը արագընթաց։
և ամէն անդամքը միմեանց պատշաճ և
գեղեցիկ։

Բ։ սոր պէս ալ առանձնաւոր և անհատ
մարդ մը՝ բնական յարմարութիւնը ինքն
իրէն չէ ունեցեր ամէն աղէկութիւնը
մէկանց։ այլ՝ ոմն զայս առաքինութի՛ և
ոմն զայն։ ոմն զայս գիտուի՛ և ոմն զայն։
ոմն զայս ինչ արհեստ և ոմն զայն։

Գ։ Բայց սակայն մէկ կերպ աղէկութի՛
ունեցող մարդ մը՝ տեսնալով այլոց վրայ
ուրիշ շատ կերպ աղէկութիւներ, անոնց
ունեցածներուն նախանձաւոր ըլլալով
ինքնալ հետևէր, և աշխատանքով սատ-
ցեր է։ և աւելի կատարեալ եղեր է։

Դ։ սասանկ նախանձաւոր մարդիկներ՝
ժամանակ ժամանակ ուր աղգի կամ քա-
ղաքի մէջ ծներ և ծաղկեր են, իրենց
բնական ունեցածը և աշխատանքով ստ-
ացածը՝ բանիւ և գործով սորվեցընե-
լով՝ ան աղգը կամ քաղաքը կրթեր են։ և
մինչև հիմա անպակաս կը հետևին կրթելը
և առաւել երևելի և հռչակաւոր ընել։

Ե։ Այսպէս շատ երկիրներ՝ որ աշ-

խարհիս զանազան կողմերը մեկը մեկէ հեռու կը գըտվին, եթէ իրէնց սովորական բերքովը և արհեստներովը, և բնաձին անասուններովը և կենդանիներովը մինչև հիմա մնալու ըլլային, յիրաւի իրէնց շատ կերպ հարկաւոր բաներ չէին ունենար. ինչպէս էր Ամերիգայի աշխարհը երբ Եւրոպացիք հոն մտան։

Այց որովհետև այն երկիրներէն եր բեմն երբեմն անանկ մարդիկներ ելեր էն. որ երբ տեսեր էն օտար երկիրներու մէջ պատվական բերքեր և կենդանիներ, որ իրէնց կողմերը չը գըտվիր. նախանձաւոր եղեր էն, և այն բոյսերուն սեր մը կամ տունկը, և այն կենդանիներուն մեկ քանին իրէնց երկիրները բերեր էն. և օր է օր այնքան աճեցուցեր էն, որ այժմ անոնց արդիւնքը իրէնք ըստ բաւականին վայելելէն յետոյ, աւելորդը օտար երկիրներ կը խրրկեն և կը ծախեն. և անոնցմով իրէնց պակասը և պիտանին կը գնեն. և այնպէս թէ հարկաւոր և թէ վայելչական բանի մը կարօտութիւն չեն ունենար։

Ճ. Նախանձաւորը կընմանի ջանասէր

մեղուի։ Եւ զի ինչպէս մեղուն լեռները ձորերը կը պըտըտի, ամէն կերպ ծաղկանց վրայ կը նստի, այս վարդի ծաղիկ է՝ այս փուշի չըսէր։ Ամէն մեկէն ալ իրէն պիտանի հիւթը կը ժողվէ, փեթակը կը կը բերէ, և մեղրը կը շինէ։ Որ ինչև թագաւորներուն ընծայ կերթայ։

Այսոր պէս ալ նախանձաւոր մարդը՝ զանազան ազգի և քաղաքի օրէնքը, դիտութիւնը, արհեստները, և այլ սովորութիւնները կը նայի և կը դիտէ։ Անոնց մէջէն որ ինչ լաւ է և օգտակար և պիտանի, զանոնք կը զատէ և կառնու, և իր ազգին մէջը կը ծաղկեցընէ։ ԵՒ տանկով իր հոյրենիքը ամէն կերպ աղէկութիւն օր ըստ օրէ կը պայծառացընէ, և բարեհամբաւ կընէ։

Իսկ նախանձոտն՝ որ չար մռխանքով լեցված է, ուրիշին աղէկութիւնը չը տեսնար։ ԵՒ թէ տեսնալու ըլլայ՝ կը բամբասէ և վար կը զարնէ, և միայն զինքը կը գովէ և կը մեծցընէ։ Որպէս թէ ամէն կերպ աղէկութիւն կատարեալ է և պակասութիւն մը չունի։ Եւ զի նախանձոտը՝ ամբարտաւան և անապարծ կըլլայ։

Ասաի՝ եւ առաքեալն կը խրատէ ըսելով. * Ո՞վ լեցուք անապարհ՝ միմեանց ձայն տալոյ, և ընդ միմեանս նախանձելոյ. || Գաղ. Է. 26։

Ե. Նախանձաւորը՝ ոչ թէ միայն իր նմանեաց աղէկութիւնը կը քաղձայ, այլև անքան կենդանիները կը դիտէ, սուրբին անսուրբին խտրութիւն չընէր. հրուն վրայ բնական բարութիւն մը եթէ տեսնայ, նախանձաւոր ըլլալով յանձին կը բերէ, և այլոց կը հաղորդէ։

Կը նմանի արեւու, որ աղի ծովուն մէջէն անուշ ջուրը գողտրշի կընէ վերկառնու, և անձրեւելով երկիրը կոռոգանէ, և բազմապատիկ պտղաբերութեամբ պատճառ կը լայ։

Ը. Ասաի նախանձաւորը՝ ոչխարէն հնազանդութիւն կը սորվի. որով իր մեծին խրատը, պատուէրը և հրամանը մանիկ կընէ։

Ա՛յ զի ոչխարը իր հովուին սրնգին և կոչմանը կը հնազանդի և կը հետևի. ինչպէս տէրն մեր ըսաւ. * Ոչխարքք իմ ձայնի իմում լսեն. || Յովհ. Ժ. 27։

Թ. Աղջերուէն (ՀԷՅԻՀԷՆ) կարեկցութիւն կը սորվի. որով և տկար մարդուն ձեռք

կը բռնէ, և անոր օգնական և թիկունք կը լլլայ, որ անալ իր ապրուստը հոգայ։

Ա՝ զի երբ այս կենդանիները մեծ գետի մը անցնելու ըլլան, զօրեղները առջևէն կը լողան, և տկարները իրենց գլուխը՝ զօրեղներուն գլխուն վրայ դնելով, ուժ կառնեն, և անոնց հետ լողալով գետը կանցնին։ Ասոր կրսէ առաքեալն. * Քաջալերեցէք մեզ որ կարօղ եմք՝ զտկարու թիւն տկարացն բառնալ. || հռովմ. ԺԵ. 2։

Ժ. Լ որամարգէն (պլաբրբինէն) ընկերութիւն կը տրվի. որով վայրենի և անկիրթ գազանի պէս դուժան և մարդատեաց չըլլաց. իր ազգին և քաղաքացւոյն ընկերակցուէն չը զատվիր. ամէն ազգօգուտ խորհրդի և բանի մէջ անոնց հետ սրտանց միաբան և համագործ կը գտվի։

Ա՝ զի այս պատվական թռչունը իր տեսակը շատ կը սիրէ, և միշտ միատեղ կը շրջի։ Ասոր և՝ որն մեր պատվեր տրվաւոր առաքելոցը՝ և անոնցմով ամէն քրիստոնեաներուն՝ ըսելով. * Պատուիրան նոր տամ՝ ձեզ, զի սիրեցէք զմիմեանս. ոչ սիրեցի ես զձեզ, զի և դուք սիրես-

ջնք զմիմեանս։ ‖ յովհ. ԺԳ. 34։

ԺԱ. Ընծեռնիկէն (Խրատանոց ընծէն) խոհեմութիւն և հանճարեղութիւն կը սորվի. որով ամէն ընելու գանին մէջ խելք կը գանեցընէ. զինքը և զիր կացութիւնը ժամանակին քերմանցը և զարագային յարմարելով կը վարվի, որ վերջը նեղութիւն չը կրէ։

Ա՝ զի այս թռչունը անանկ վարպետութիւն իր գունը կը կազմէ, որ մարդկային ճարտարութիւնը հազիւ կրնայ անոր նմանը շինել։ Խոհեմութիւն կը ճանչնայ պատշաճաւոր ժամանակը և տեղին, և այնպէս իր կենցաղը կը անօրինէ. ձմռը վան ցուրտ տեղը ծովը կանցնի, ջերմային գաւառը կերթայ, և ամռվան ժամանակը նորէն եւ կը դառնայ կուգայ, որ իր կեանքը պահպանէ։ Ուստի կրսէ սողոմոն. * Գաւ է իմաստուն քան զհզօր, և հանճարեղ քան զայն՝ որ ունիցի դասակերտս մեծամեծս. ‖ սաղ. իդ. 5։

ԺԲ. Փիղէն (Քիլէն) ծերատածութիւն կը սորվի. որով իր քաղաքին անկարը ծերը՝ որ գործել չը կրնար, կը նայի և կը

ինամէ. և այն մարդը՝ որ ձախորդ գիպ վաճառով մը ընկեր և աղքատացեր է, և ինք նիրմէն գործոյ մը վրայ չը կրնար ելլար, որ աւուր հացի գին մը շահի, անանկին ձեռնտու կը լայ, և բանի մը վրայ կը հանէ. որ քիչ շատ վաստակ մը գտնայ, և կաթօտ և ողորմելի չը մնայ։

Ա՝ ղի այս կենդանին երբ կը հոգնի, կերթայ մեկ ծառի մը կը կռթընի որ հանգչի. բայց աւելի կուզէ ուռի (սէօյի-ոթ) ծառի կռթընիլ։ Սակայն երբեմն կը պատահի որ մարմնոյն ծանրութէն այն ծառը կը կոտրի, և փիղը կը կործանի. ապա թէ փիղը ծեր ըլլայ՝ ինքնիրմէն չը կրնար կանգնիլ, պօռալու ձայն մը կը հանէ. ան տեսնը ուրիշ փիղերը հոն կը ժողվին, և ամէն մեկը իրէնց կարեացը չափ կաշխատին, և կոր ծանած փիղը վեր կը վերցնեն։ Ուստի կըսէ իմաստունն. * Եթէ գլորիցի մին՝ կանգնեսցէ զնա ընկեր իւր. և վա՛յ միումն յորժամ գլորիցի, և ո՛չ գուցէ միւս՝ որ յարուցանիցէ զնա։ ‖ ԺՍՂ. Դ. 10։

ԺԴ. Աղջերուկ թռչունէն՝ իր ծը նօղքը պատուել կը սորվի. որով անոնց

հարկաւոր պիտոյքը կը հոգայ, և ուրախ սիրտ կը պահէ և կը մեծարէ. և ինքնալ ծնողացը օրհնութիւնը յաջողութիւն և բարի կը գրանայ։

Ա՛ռ զի այս գթած թուչունը՝ իր ծերացեալ ծնողը ուսոցը վրայ կը բառնայ, և այնպէս կը պըտըտցընէ։ Ուստի կըսէ սիրաք իմաստուն. * Ա՛ծարեա՛ դու զՀայր քո, զի ծաղկեսցէ՛ ի վի՛ր քո օրհնութի՛ն նո՛ր։ ‖ սիրաք. Ճ. 6։

Ժ. Հաւէն՝ որդիսէր ըլլալ կը սորվի. որով զաւակունքը և ընտանիքը սիրով և գթութի՛ կը դարմանէ. ինքը քիչ կուտէ, զանոնք կը կըշտացընէ. ինքը հին կը հագնի, անոնց նոր հագցընել կը ջանայ. օգտակարը և պիտանին կառաջարկէ, և ամէն չար և վնասակար բաներէն կըզգուշացընէ և կը պահպանէ։

Ա՛ռ զի այս ընտանի թուչունը՝ ինչպէս հանապազ կը տեսնանք, իր ձագերուն վերայ գթած է. առաւել կը հոգայ զանոնք՝ քան թէ զինքը։ Երբ կերակուր կը գտնայ՝ ձագերը կը կանչէ, և իրմէ աւելի կը կըշտացընէ. երբ ցինը (չոյչոյը) կը տեսնայ, իսկոյն ձագերը

թեւին տակը կը ժողվէ և կը պաշտպանէ։ Ընոր համար ըսաւ տէրն մեր. * Բա-նիցս անգամ՝ կամեցայ ժողովել զման-կունս քո՝ զոր օրինակ ժողովէ հաւ ըզ-ձագս իւր ընդ թեւովք, և ոչ կամեցա-րուք։ || Մատ. Իզ. 37։

Այսպէս ամէն մէկ կենդանիներուն բնականին մէջը եղած աղէկութիւններէն՝ նախանձաւորը իրէն օգուտ կը հանէ, և այնպէս իր բարքը և վարմունքը աւելի ևս բարի կընէ։

Ժէ. Ուրեմն (խոտընճայէն) նա-խատեսութիւն կը սորվի. որով յաջողուէ ժամանակը՝ անփոփոխ կարծելով անհոգ չը կենար, այլ իմաստուն մտօք ձախոր-դուինալ միտքը կը բերէ. և ան ատենին հարկաւոր եղածը կաշխատի և յառա-ջուց կը պատրաստէ. որ ձախորդութիւնը յետոյ իրէն կեցութիւնը ինաս չը տայ, կամ թեթեւութիւնը անցնի։

Ա՜ի զի այս փոքրիկ կենդանին՝ ան-դադար աշխատանօք ամռըվընէ ցորեն կը ժողվէ, որ ձմռըվան եղանակին ու-տէ. և երբ ցորենը անձրևէն կը թրջի, արևը կը դնէ և կը չորցընէ, և մէջ տեղէն

կը ճշդէ՝ որ չը քուսանի. և կը տանի իր բնակարանին ներսի կողմը կը պահէ, որ ոչ թշուառութիւնը ուտէն, և ոչ հովը կարենայ ցրուել։ Ուստի կըսէ խմաստունն. * Ո՛րթ առ մրջիւն ո՛վ վատ, և նախանձեա ընդ ճանապարհս նոր. և լե՛ր խմաստնագոյն ևս քան զնա. զի նոր ո՛չ գոյ հողագործութիւն, և ո՛չ հարկադիրը, և ո՛չ ընդ տերտանքք է. և պատրաստէ ամարանի զկերակուր, և քաղուս համբարս դնէ՝ի հունձս։ || ՍՈՍՀ. Ղ. 6։

ԺԳ. Իսկ նախանձոտը՝ որովհետև իր կամքը և քաղձանքը գլխուվին ապականեալ ունի, ոչ իր նմանեաց առաքինագործ քաղաքավարութիւնը, և ոչ ուրիշ ստեղծուած մը բնական աղէկութիւնը կը տեսնայ, որոնցմէ քարի խրատ մը առնու։ Այլ որքնչ այլոց վնասակար է, քայց քը նութիւնը տրուեր է ոմանց կենդանեաց իրենց անձին պահպանութեանը համար, զանոնք իրէն օրինակ կառնու, և աւելի ախտաւոր կը լայ։

ԺԴ. Ուստի նախանձոտը՝ քուէն (պոչ խուշէն) մարդատեաց ըլլալ կը սորվի. որով քարի մարդու մը հետ ուղիղ սը-

տով կենցաղավարուելի ընել չուզէր, այլ մանաւանդ կը ջանայ վնասել, տեսնալով որ իր քնութիւնը դէմ է։

Ա՛ զի այս գիշերասէր թռչունը՝ աւերակ և անմարդի տեղ կը բնակի. և կը տեսնայ որ աղաւնին մարդասէր և մարդամօտի է, կը չարանայ և թշնամութիւն կընէ. աղաւնոցը կերթայ, անոր հաւկիթները կը ցրուվէ և կուտէ. որ չաճի և չը շատնայ։ Ուստի կրսէ ՝ի՞նչ յոյ հանէս աւետարանիչը. թէ * Ի՛մ ենայն որ ատեայ զեղբայր իւր՝ մարդասպան է. և գիտէք՝ զի ամ մարդասպան ոչ ունի կեանս յաւիտենականս յանձին հաստատեալ։ ||ա. յօհ. գ. 15։

Ժը. Լորենիէն (ղը-Ըլանէն) դաւաճանութիւն և խաբէական հնարք կը սորվի. որում երբեմն այլոց բարեկամութիւն և պատիւ ցոյց կու տայ. բայց երբ ժամ պարապոյ (քըռանոպ) գտնայ, չարաչար կը վնասէ, սակայն և ինքն ալ անպատիժ չը մնար։

Ա՛ զի այս գայլաբարոյ գազանը՝ երբեմն՝ անտառներուն մէջը կարավանին քովերէն կերթայ՝ մինչև որ մեկին ա-

նունը սորվի։ և ապա իր ձայնը մարդու ձայնի նմանցընելով՝ անոր անունը կուտայ և իրէն կը կանչէ։ անալ իր ընկերը կարծելով՝ երբ կարավանէն դէպ անտառը կերթայ, իսկոյն կը յափշտակէ։ Նոյնպէս երբեմն գիւղերու մօտերը կը պրտրտի։ և անունը սորված մարդուն բնակարանը կերթայ և կը կանչէ։ և նա երբ խաբվի և դուրս ելլայ, վրան կը վազէ և կը գիշատէ։ Ուստի կրսէ իմաստունը։ * Որ պատրաստէ յերեսս բարեկամի իւրոյ որոգայթ, շուրջ արկանէ զայն զոտիւք իւրովք։ || առաձ։ իգ։ ե։

ԺԹ։ Ղվէսէն՝ կեղծաւորուն կը սորվի։ որով զանազան խաբէութիւններ գործածէ, որ իրէն շահ մը ընէ։ ուստի ասանկներէն ճանչնալ, և անոնց գաղտնի որոգայթներէն ըզգուշանալ յիրաւի խիստ դժվար է։

Ա՝ զի այս նենգաւոր կենդանին՝ ասանկ խորամանկութիւնալ ունի, որ երբեմն զինքը մեռեալ կը ձևացընէ։ և երբ թռչունները իրաւ կարծելով գլխուն վրայ կիջնան, յանկարծ կը բռնէ զանոնք և կուտէ։ Ուստի կը խրատէ սի-

ըսաք իմաստուն, թէ * «այր իմաստուն
և զողջախոհ յամ ժամ սիրեսցես. զի ամ-
բարտաւանն սրտիւ և նենգաւոր իբրև
զդէտ գիտէ զնենգութիւն, զի բռազմա-
դիմի է չարիք նոր։ ‖ սիրաք. ԺԱ. 32։
Եւ առն մեր ասէ. ‖ «գոյշ լերուք 'ի
սուտ մարգարէից՝ որք գան առ ձեզ
հանդերձիւք ոչխարաց, և 'ի ներքոյ են
գայլք յափշտակողք։ ‖ մատթ. Է. 15։

Ի. Ա. յսպէս նախանձոտը՝ առիւծէն
հպարտութիւն կը սորվի. որով վիսոյն իր
անձը մեծ և արժանի պատվոյ կը համան-
ի, և զայլ ամ մարդիք անարգ և վատ-
թար։ Ուստի կը պատվիրէ նոր պօղոս ա-
ռաքեալը իր տիմոթէոս աշակերտին՝ ա-
սելով. * Ա՝ԷԾատանց՝ որ են յայսմ աշ-
խարհի՝ պատուէր տայջիր՝ մի՛ հպարտա-
նալ և մի՛ յուսալ 'ի մեծութիւն մնոտի։
‖ ա. տիմոթ. Ղ. 17։ Ուր ասէ մեծն օ-
գոստինոս. * Ի՝ սիրձ զհպարտութիւն, և
հարատութիւք ոչ ճնասէն ‖։

Իա. Ա. ՐՋԷՆ՝ նախանձոտութի կը սորվի.
որով կը տրտամի և ցաւ կընէ իր ընկերին
յաջողութիւնը և համբաւոյն վրայ. և ու-
րախ կը լլայ որպէս թէ գանձ մը գտեր է,

երբ կը տեսնայ ձախորդութիւն և նեղութիւն մէջ ընկած։ Աստի կըսէ խմաստունը. * Նողորմ է սրտմտութիւն, և սատակիչ է բարկութիւն. այլ նախանձ և ոչ խիզախ ժուժ կալէ։ || առակ. իէ. 4։

Իբ. Պարաղէն (Վայրէ խոպէն) բարկացողութիւն կը սորվի, որով իր կամքին դէմ քիչ մը բան տեսնալու ըլլայ, իսկոյն կը բակի պէս կը բրբռնկի. ոչ մեծ և ոչ պզտիկ կը նայի. կատաղի գազանի պէս դէմն ելածը կը բրզբքտէ։ Նոր համար ըսաւ քա՜ռն մեր. * Մեծայն որ բարկանայ եղբօր իւրում առանապարտուց, պարտաւոր լիցի դատաստանի։ || Մատ. Է. 22։

Իգ. Գայլէն՝ խստասրտութի կը սորվի. որով տկարը ոտքի տակ կառնէ. ձեռքէն եկած վնասը կընէ. իրէն աղաչողներուն չը գթար։ Աստի կըսէ խմաստունը. * Որ խնու զլսելիս իւր զի մի՛ լուիցէ տկարաց. և նա կարդասցէ առ քո, և ո՛չ լուիցէ նմա։ || առակ. իա. 13։

Իդ. Աղտէն՝ ոխակալութի կը սորվի. որով իր եղբօրը յանցանքը չը ներէր՝ որչափ մեղայ ըսէ. այլ սրտին մէջը կը պահէ, մինչև պարապոյ ժամանակ

(Քրիստոսի) գլխոնայ, և անոր չարիք հա-
սուցանէ, և իր վրէժը առնու։ Ուստի
քո՞ւն մեր ըսաւ. * Լութէ թողուցուք
մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ
հայրն ձեր երկնաւոր. ապա թէ ո՛չ թո-
ղուցուք մարդկան զյանցանս նոցա, և ո՛չ
հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր։
|| Մատ. Զ. 14։

Լե. Թիմոթեոսէն (Գէրվանէյէն) հետաքրքրութիւն կը սորվի. որով իր բանը գործը երեսի վրայ կը ձգէ, ուրիշին գործքը խմանալու համար ասդիս անդին դասարկ կը պրտրտի. որ բանասարկութիւնն մեկին խօսքը մեկալին տանի և զրվարձանայ։ Ինոր համար կը խրատէ սիրաք Իմաստունը՝ ասելով. * Որ ինչ աւելին է քան զպէտս քո՝ զայն մի՛ զններ. և մի՛ մոլորիցիս կարծեօք, զի զբազում հանճարք զաց խորհուրդս կարծող միտք դայթակղեցուցին։ || Եկեղ. Զ. 24։

Լդ. Դայց յետոյ ինչպէս Թիմոթեոսը իր անմիտ հետաքրքրութիւնը ճրագին մէջը կնչնայ կերի և ոչ ինչ կըլլայ. ասոր պէս ալ նախանձոտ մարդը իր չար մախանօքը կայրի և կը տոչորի. ինչպէս կըսէ հա-

սարակաց առաջը։ ‖ Ով որ նախանձի, նախ ինքն խանձի ‖։

Այս ով բարեմիտ մանկունք՝ 'ի որ զայրութեէ միշտ աղէկին նախանձաւոր եղէք, ոչ զի 'ի մեծութեէ կրթեալ և առաքինի ըլլաք։ և օգտակար և յիշատակաց արժանի գործ մը ընելով՝ ազգէ ազգանուն բարի ունենաք։ Ուստի կըսէ նը առաքեալը։ * Նախանձաւոր լերուք շնորհացն, որ լաւն է։ ‖ Ա։ Կոր։ Ժբ։ 31։

ԳԼ։ Ժ։

Աշխատիրոնիան։

Աշխատիրութիւնը անանկ գեղեցիկ և պատվական առաքինութիւն մը է, որ ուրիշ ամէն բարոյական առաքինութիւնները իր մէջը կը պարունակէ։

Այո զի ուրիշ առաքինութիւնները մասնաւոր մարդիկներու դէմ կը գործեն, և անոնց անկարգութիւնները կուղղեն։ Իսկ սա՝ ամէն կերպ մարդի և անկարգութի կը բարեկարգէ։ կը նմանի անանկ աղնիւ և զօրաւոր տեղի մը, որ ամէն

միասակար ախտ և հիւանդութիւն կը բժշկէ։

Այսոր ներհակ՝ ազգասէրութիւնը անանկ վատթար և միասակար մոլութիւն մը է, որ ուրիշ ամէն մոլութիւնները իր հետ կրնց ունի։

Ա՛ զի ազգասէրութիւն ամէն բարեկարգութիւն կը խանգարի. մեծը և պզտիկը՝ հարուստը և աղքատը՝ իրենց վիճակին պատկանեալ պարտաւորութիւնը չեն կատարեր, իրենց արժան և վայելուչ եղածը չեն ըներ։

Ա՛չ մեծը գթութիւն և խնամք կընէ փոքրին, և ո՛չ փոքրը հնազանդութիւն կընէ մեծին. ո՛չ ծառայն միամիտ սրտով կը ծառայէ, և ո՛չ տէրը անոր աշխատանքին արդար հատուցում կընէ։

Ա՛ զի արդարութիւնը՝ որ այլ առաքինութեց կանոնաւորիչն է, ան ալ իր ուղղութիւնը կը ծռուէ. անոր համար հայրենասէրը՝ իրեն ազգօգուտ գործոցը արժանի պատիւ և շնորհակալութիւն չունենար։

Արքայասաւորը՝ իր արդիւնաւոր ջանքերը համեմատ վարձք չը կրնար առնել։ Բանաստեղծն և մարդահաճոյն՝ բազում օգտիւ 'ի բարուէ կը վայելէ։ Ունայնաբան հացկատակը՝ ամէն տեղ յարգանք

և ընդունելութիւն կը գտնայ։

Ը. Ազգատեցութիւնը՝ բոլոր ազգին մէջ խռովութիւն և անվիայանութիւն կը տիրէ. անոր համար հայրը՝ իր որդւոյն պակասութիւնը ծածկելու տեղը, կը նայի որ անոր վրայ պակասութիւն մը գտնայ և պախարակէ։

Ա. Յոպէս որդին ալ՝ իր հօրը մեծարանք և օգնութիւն ընելու տեղը, թշնամութիւն ընել կը ջանայ։ Աղբայրը՝ իր եղբօրը փոքր պակասութիւնը մեծ կը տեսնայ. և ընկերը՝ իր ընկերին վրայ զուր տեղը յանցանք կը դնէ։ Աւ սանկով վէճ և կռիւ կը յարուցանեն. օգտակար խրատները և յորդորմունքը մեկդի կը ձգեն, և մեկզմեկ ինսաի կը հանդիպցընեն։

Թ. Աղգատեցութիւնը՝ ողորմելի և խեղճ անձինք երեսի վրայ կը մնան. աղքատին և տնանկին պէտք եղած գթութիւնը և խնամքը չը լսըվիր. որբը և այրին բարձի թողի կը լան։

Ա. Զի ամէն մարդ անանկ կը դնէ մտացը մէջը, ոչ թէ մինակ իրէն համար է ծներ, և ոչ թէ իր ընկերին համար ալ. անոր համար մինակ իր աղէկ ապրիլը կը նայի, և չքաւորը բնաւ երբէք միտք չը

քերէր։ Եւ չուզէր գիտնալ, թէ մարդ
կութեան պարտաւորութիւն է օգնութիւն
ընել անոնց, որ նեղութեան մէջ ընկեր
են, և ճար չունին, և ինքիրենին չեն
կրնար ելլար։

Դ. Զգաստեցութիւն՝ դպրատուններըը
օր ըստ օրէ կը խանգարին և կաւրըվին.
և աղջին տղաքն ալ քաղաքավարական
կրթութիւն՝ և այլ հարկաւոր ուսմունք
նեերէն կը զըրկըվին, և վայրենի և տգէտ
կը մնան. և ասանկ մեծնալով՝ իրէնց ալ
զաքն ալ իրէնց պէս անվարժ կը թողուն։

Ա՝ զի ինչպէս որ իրէնք միայն հա-
սարակ կարդալ և գրել գիտեն, իրէնց
զաւակներուն ալ այս չափս բաւական կը
սեպեն. և չեն բաղձար և հոգ չեն տա-
նիր, որ քերականութի և գրաբառ լեզուն
ալ սորվին. ոչ զի հին և նոր կտակարա-
նը, և այլ հոգեշահ վարդապետութեց և
օգտակար ուսմանց գրքերը կարդան և
հասկընան. և Ջերմեռանդ քրիստոնեայ
և մարդավարի և աղգասէր ըլլան։

Է. Զգաստեցութիւն՝ ոմանք մարդիք ի-
րէնց հայերէն պատվական լեզուն ա-
նարգ և ցած համարելով՝ տան և ընտա-

նեացը մէջ օտար լեզու կը խօսին. և ա-
նոնց որդիքնալ անանկ սորվելով՝ իրէնց
հայրենի լեզուէն բոլորովին անծանօթ
և անտեղեակ կը մնան։

Ինչպէս ահա եղեր են քանի մը երկրի
հայկազուն բնակիչները. որոնք ոչ գիրք
և ոչ աւետարան կը հասկրնան. ոչ ՀԱԾ-
ային ժամերգութիւն և ոչ ՀԲ պատարագի
ընթերցվածներուն համը կառնեն. այլ
ժամուն մէջը՝ որպէս թէ ուրիշ քրիստո-
նեայ ազգի մը եկեղեցի կը մտնան և
կաղօթեն, և հոգևոր քաղցրութէն ան-
ճաշակ կելլան։

Այս եթէ լաւ մը մտածելու ըլլանք,
և այլ բարեմիտ ինաս և եղկութի ազգա-
տեցութէ կըրնայ յառաջ գալ, և բոլոր
ազգը թըշվառ և ողորմելի ընել. միայն
ազգասիրութէ առաքինութինէ՝ որ այս
ինամները կը բառնայ, և որչափ կարելի
է՝ ազգը բարեբաստ և երջանիկ կընէ։

Ազգասէրը՝ իր ազգին աղէկութիը
վրայ կուրախանայ և կը փառաւորի. և
անոր պակասութիը վրայ կը տրտմի և
սրտանց կը ցաւի. և ձեռքէն եկածին
չափ անոր օգնութի կընէ։

Ուստի երբ կը տեսնայ իր ազգին վը պակասութիւն մը կամ անկարգութիւն մը, իր ազգը չի ատեր, այլ քէն չը հանէր, և զըզ վելով մեկ դի չը քաշվիր. այլ ամ հոգւավ կաշխատի, և այն պակասութիւնը կամ անկարգութիւնը կուղղէ և կը բարեկարգէ։

Ա՞ զի եթէ առանձին մարդ մը՝ որ չատ և առաքինի և կատարեալ ըլլայ, տակաւին մեկ պակասութիւն մը անոր վրայ կը գտնըվի։ Ա՞պա մեկ մեծ ազգ մը՝ որ զանազան ազգի և քաղաքի մէջ բնակած է, կարելի՞ է մի արդեօք՝ որ բնաւ մեկ պակասութիւն մը չունենայ։

Ա՞ի թէ ազգ ըսածնիս՝ այլ և այլ բարք և բնաւորութիւն ունեցող մարդկանց հաւաքումն չէ՛ մի. որ ամէն մեկը առանձին՝ քիչ կամ շատ պակասութիւն ունին։ Ա՞պա երբ միասին հաւաքեալ մտածվին, արդեօք այն բարոյական միութիւնը անոնց պակասութիւնը կը բառնայ մի. ոչ ապաքէն առանց պակասութիւն չը կրնար ըլլալ. զի անպակաս միայն ա՞ծ է։ Ա՞պա անհնար է որ մեկ մեծ և տարածեալ ազգ մը՝ բը նաւ պակասութիւն մը չունենայ։

Բայց ինչպէս ճշմարիտ բարեկամը՝ իր

բարեկամին պակասութիւնը չը գովէր մար-
դահաճոյի պէս. կամ այլոց չը պատմէր և
վատ զարնէր թշնամոյ պէս. այլ ծածկա-
բար իրէն կիմացընէ, և այնպէս սիրով
կուղղէ։ Այս թէ անոր պակասութիւնը՝
իբրև բարեկարգութիւն մը գովէ, կամ
թէ այլոց հրատարակէ և բամբասէ,
այնպիսին չէ բարեկամ։

Այսոր պէս ալ ճշմարիտ ազգասէրը չէ,
որ եթէ ժամանակին բերմունքէն կամ
անհոգութէն՝ ազգին մէջը պակասութիւն մը
մտէր է, զայն կը ծածկէ կամ կը ջատա-
գովէ, և կը թողու որ անանկ մնայ. և
կամ օտարներուն կը բամբասէ, և իր ազ-
գը վատ կը զարնէ. և չը մտածէր որ ինքն
ալ նոյն ազգէն է. իր ազգը պախարակե-
լով՝ ինքնալ պախարակելի կը լայ։

Է. Ազգասէրը՝ իր ազգին մէջէն խը-
ռովութիւը կը վերցընէ, և խաղաղութիւն կը
հաստատէ։ Ան զի իր ազգը կը սիրէ,
ոչ թէ իր շահուն համար, այլ թէ պար-
տականութիւն ունի սիրել։ Ուստի կը քննէ
կը նայի խռովութեան պատճառները, և
զանոնք կը բառնայ. և կռիւ և հակառա-
կութիւն ընելու առիթ մը չը մնալով, սէրը

և միաբանութիւնը ինքնին կը հաստատվի։

Եւ ապա կըսկըսին իւրաքանչիւրքը՝ հարկաւորուն ատենը փոխադարձաբար օգնականութիւն ընել միմեանց։ և ամենքն՝ ի միասին հասարակաց բարւոյն և օգտին համար աշխատիլ։ Եւ յետ այնորիկ մի-մեանց վրայ պակասութիւն մը տեսնան նէ, աչքերնուն չերևնար։ վասն զի հասարա-կաց առաջ է, թէ ||Ամէն կոյր է իր բա-րեկամին պակասութիւնը տեսնալու||։ անոր համար գլուխ պատվիրանին սէր է ըսաւ՝ որ պօղոս առաքեալը։

Ը։ Ազգասէրը՝ իր ազգին աղքատը և տնանկը՝ որբը և այրին, որ իրէնց հար-կաւոր պէտքը իրէնք չեն կրնար հոգալ և այլոց օգնութիւնը կը կարօտին, անոնց կը գթայ և կողորմի։ վասն զի իր ազգին վրայ սէր ունի, ինչպէս զաւակ մը իր հօրը վրայ։

Ուստի երբ կը տեսնայ կարօտ մը կամ փորձանաւոր մը, անոր խղճութիւնը սիր-տը չը դիմանար, ձեռքէն եկած խնամքը կընէ։ Այս ալ գիտէ, թէ մարդոյս ընա-կան պարտքն է, օգնուի ընել ընկերին, որ նեղութիւն մէջ ընկեր է և չը կրնար

ելլար։ և պէ՛տք է իր կարողութիւնը չափ անոր կարօտութիւնը բառնալ կամ թեթևցընել։

Եւ ասով յայտնի կըլլայ, թէ չէ՛ նա անձնասէր, միայն իր անձին հանգստութիւնը հետևօղ, այլ մանաւանդ ուծասէր, իր ընկերին ալ բարերարօղ։ Ասոի կըսէ ուբ յովհաննէս աւետարանիչը։ * Այս պատուէր ունիմք առ՝ի նմանէ։ զի որ սիրէ զուծ, սիրէ նաև զեղբայր իւր։ || ա։ յովհ։ դ։ 21։

Թ։ Զգասէրը կը ջանայ որ դպրատուններըը օր է օր ծաղկին և բարգաւաճին։ Ա՛ ուզի լաւ գիտէ, թէ դպրատուններ՝ որ բոլոր ազգը կրթեալ և քաղաքավարի կընէ։ քանզի իւրաքանչիւր մարդ՝ի տղայութիւն հոն կրթըվելով, հետզհետէ սոպռութիւնը ազգէն բոլորովին կը բարձրվի։

Ա՛նոր համար թէ խորհրդով, թէ խօսքով, թէ աշխատանքով, թէ արծաթով՝ դպրատուններուն շինութիւնը և բարեկարգութիւնը ջանք կընէ։ որով ազգին մանկունքը հոգևոր և մարմնաւոր ուսմամբ և գիտութիւնբ կը զարդարին, և ուբ եկեղեցին շինուի կառնու և կը պայծա-

ռանայ ։ և ազգին անունը և համբաւը՝ ուրիշ ազգաց քով կը բարձրանայ , և վարկում և պատիւ կունենայ ։

Ժ. Ազգասէրը՝ իր հայրենի ազգին լեզուն կը խօսի տան և ընտանեացը մէջ։ ոչ զի իր զաւակունքնալ զայն սորվին և 'ի գործ ածեն ։ Ա՛ն զի ազէկ գիտէ , թէ ազգին գլխաւոր կապը՝ լեզուն է ։ որով բիւրաւոր բազմութի ազգին կը միաւորի և մէկ ազգ կլինի ։ ուստի այն մարդը՝ որ իր ազգին լեզուն չը գիտէր , ազգէն զատված և բաժնըված կը սեպվի ։

Շատ անգամ տեսած եմք և գիտեմք։ որ օտար ազգերը մեր վրայ կը ծիծաղին, երբ խօսած ատեննիս՝ մեր խօսքին մէջը իրէնց լեզվին բառերը կը խառնենք ։ և մեզի ծաղր կրնեն ըսելով , Ա՛խա՜ որ աշխատ եղար հայերէն խօսելու համար , երբ ըսածնէրուդ շատը մենք հասկըցանք ։ Ա՛պա որչա՜փ առաւել ծաղր ըլլալու արժանի կը գտվինք , երբ մեր բուն լեզուն բնաւ չը գիտնանք , և բոլոր խօսակցութինիս օտար լեզու ընենք ։

Շատ անձինք ալ կան , որ իրէնց հայրենի լեզուն գիտեն ։ բայց ինչպէս յա-

ռաջ ըսինք, անպիտան և անարդ լեզու մը սեպելով, օտար լեզու կը խօսին, և իրենց զաւակացնալ զայն կը սորվեցընեն։ Թանզ զանոնք՝ որ եթէ մեկը անխառն և մաքուր աշխարհաբառ լեզու խօսակցութիւն ընելու ըլլայ օտարի քով, զայն պիսին ծաղը կընեն։

Այս տեղը կարճ խօսքով անկարելի է անանկներուն հասկըցընել հայկական լեզուին աղնըվու�ը։ Մեկ մը որ՝ է առաջին և մայր լեզուն աշխարհի, որ ադամ նախահայրէն նոյ նահապետին անցաւ. և յետ ջրհեղեղին նոյի տապանը հայաստան երկիրը՝ արարատ լեռանը վրայ նըստաւ. նոյ իր ընտանեօքը ելաւ նախիջևանու հողը բնակեցաւ։

Այս երբ բաբելոնի աշխարհին մէջը՝ 'ի պատիժ աշտարակաշինութեան հոն եղողներուն լեզուն խառնակվեցաւ, նոյի և իր ընտանեացը և այլ հայաստան բնակողներուն լեզուն անխառն մնաց։

Այս երբ մեր հայկ նահապետը բաբելոնէն հայաստան եկաւ, որ այն ժամանակը նոյ կենդանի էր. ինքնալ նոյի և այլ հայաստան բնակողներուն լեզուն

ըսկսաւ խօսիլ, որ իր առաջին և բուն լեզուն էր. և ասանկով այն ճծ-ապարգև լեզուն ազգայ՝ մեր հայոց ազգը ժա-ռանգեց։

Եւ այս լեզուն է, որ այժմ գրաբառ լեզու կըսվի. որով ճծ-աշունչ գիրքը, և այլ շատ պատուական գրքեր գրվաձ են. և մեր մաքուր աշխարհաբառ լեզուն ան-կէց ծներ է. և նոյն գրաբառին շատ մօտ է. և անով գրաբառը շուտ և հեշտ կը սորվըվի։

Եւ մեկմալ՝ որ շատ անուշ է մեր հայոց լեզուն. վա՜ղ ի՜ ոչ կոկորդային և խուժադուժ կը հնչէ, և ոչ լեզուի ծայ-րով կը խօսվի. այլ միջասահման և քաղցր հնչումն ունի։ Ընոր համար ամէն այլ և այլ ազգի լեզու կըրնանք խատակ խօ-սիլ. մինչև ուրիշները չեն կըրնար ճանչ-նալ, թէ օտար ազգ է խօսողն։

Եւ ասոնցմէ 'ի զատ՝ խիստ ճոխ և հա-րուստ է հայոց լեզուն՝ իր բուն և սեպ-հական բառերովը, մինչև մեկ նշանակու-թիւն վերաբերեալ, շատ բառեր կան. իսկ բարդելով և ածանցելով անթիւ բառեր կրնայ ունենար հայոց լեզուն, ինչպէս

յայտնի է քաջ լեզուագէտներուն։

Ուստի երբ մեր ազգին մանկունքը ուսման սէր ձգեն, քերականութի և գրաբառ լեզուն աղէկ սորվին, այն ժամանակը ինքնին կը հասկընան և կը վկայեն մեր հայոց լեզուին պատուականութիւնը։

Հիմա այս միայն թող լաւ մտածեն, թէ քանի՞ վնասակար է շահի և վաստակի հայերէն լեզու չը գիտնալ, և հարկաւոր կամ ծածուկ խօսելիքը՝ առուտուրի մէջ օտար լեզու խօսիլ։ Եւ յիրաւի ոչ թէ միայն շահի և վաստակի վնաս կը բերէ, այլ և կենցաղավարութեան մէջ վտանգաւոր է, և անզգուշ մարդը՝ փորձանքի մէջ կը ձգէ. ինչպէս որ շատ անգամ պատահեր է։

Ուստի ազգասէրը աղէկ գիտնալով, թէ խիստ հարկաւոր և օգտակար է ազգին անխատն և մաքուր հայերէն խօսիլ, դպրատանց մէջը այն լեզուն սորվը ցընել կու տայ տղայոց. և կը ցանկայ, որ ամէն մարդ նոյն մաքուր լեզուն խօսին, և իրենց զաւակացը սորվեցընեն։ Պէտք է քերականութի և գրաբառ լեզուն անաշխատ սորվին, և ծածաշունչ և այլ օգ-

տակար և իմաստալից գրքեր կարդան և հասկընան ։ և գիտուն և առաքինի և ջերմեռանդ քրիստոնեայ ըլլան ։

Ժա ։ Ա՝ երջապէս՝ ճշմարիտ ազգասէրը ամենևին չը թուլնար և ձեռքը չը քաշէր ազգօգուտ գործքերէն, երբ որ ոմանք նախանձոտ կամ ապերախտ մարդիք՝ իր ըրած բարերարութիւնը չը ճանչնալով, կամ իր հայրենասիրութիւնը և բարի անուանը նախանձաբեկ ըլլալով՝ զինքը յանիրաւի կը բամբասեն, կամ ըրածնեռուն չարաչար մեկնութիւն կու տան ։

Ա՝. յլ մանաւանդ հասարակաց օգուտը նայելով՝ ազգասիրութիւն հոգւով ևս առաւել կը վառվի ։ արծաթոյն և ծախքին չը խնայէր՝ դպրատունները կը նորոգէ, նոր եկեղեցիները կը պայծառացընէ ։ և ձեռքէն եկած բարին իր ազգին կընէ ։ Նա այսպէս իր բարի անունը և յիշատակը յաւիտեան անմահ կը նէ աշխարհի վրայ ։ և իր բարերարութիւն փոխարէն վարձքը յոյս կառնու՝ թէ սատ և թէ 'ի հանդերձեալն ։

Ա՝ ն զի յն քն բարեգութ ՝ն մեր, որ մեկ մարդու մը իր սիրուն համար

բաժակ մը ջուր խմցընողը՝ վարձատրել կը խոստանայ իր անսուտ բերանովը։ ապա միլեոնաւոր աղդի մը բարի ընողը՝ որչափ առաւել մեծամեծ վարձուց արժանի պիտի ընէ։ ինչպէս եթէ աւետարանին մէջը ըսաւ բարերարութի ընողներուն։ թէ * Ամէն արձք ձեր բաղումն են յերկինս։ || Մատ. Ե. 12։

Ամ՝ զի մարդուս մէկ բարի գործը՝ որչափ և փոքր ըլլայ, տակաւին ոչ ինչ չըլլար, այլ իր փոխարէն վարձքը ունի։ ինչպէս նոյն տէրը վկայեց, թէ * Ամ՝ աղ մի՛ դլխոյ ձերմէ՝ ոչ կորիցէ։ || Ղուկ. Ի. 18։

ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Լուր առաքինի՝ զայս խրատ վերջին,
Եւ լեր երջանիկ՝ 'ի կեանս յերկոսին։
Կամակար սիրով՝ հատո՛ արար չին,
որ ինչ է արժան՝ մեծութեանն նորին։
Ա՛ի լինիր ընկեր՝ վատաբարոյ ին,
այլ ընդ խոհեմին՝ և ընդ համեստին։
Ա՛ի գոռոզանար՝ վասն տաղան դին,
զոր 'ի բնութեանէ՝ ունիս անդս տին։
Յարմարեա՛ զքեզ՝ դատման ընկերին,
առ անեղծ մնալ՝ սիրոյ պայման նին։
Տեղի՛ տուր բանից՝ հակառակո ղին,
մերթ յետս կացեալ՝ յիրաւանց քոյին։
Ախտապէս խորհեա՛ց՝ պարագայս իրին,
և ապա մատո՛՝ ձեռն 'ի գործ նորին։
Ո՛ւնկն դիր բանից՝ որ ինչ քեզ ասին,
գուցէ օգուտ քեզ՝ գտցես 'ի նոսին։
Ա՛ի երբեք ցուցցես՝ արտաքոյ կարգին,
խորագիտութի՝ և հանճար նրբին։
Ա՛ի խօսիր զիրաց՝ ընդ ումեք անձին,
որ են բարձրագոյն՝ քան զկար նորին։
Լեր ճշմարտախօս՝ յամենայն մասին,
մինչ առնց երդման՝ բնք քո ընկալցին։
Ա՛ի ինչ խոստանար՝ անխոհ 'ի մտին,
մի՛ ժխտեր խոստմանդ՝ կա՛ց հաւատրիմ։

Լէր քաղցրաբարոյ՝ ընդ անծանօթին,
գթաած բարերար՝ առ աղգ մարդկային։
Յոյց զդէմս քո՝ միշտ զուարթա գին,
առ ո՛ և իցէ՝ մարդ կանանցա ծին։
Մի՛ հատցես վճիռ՝ զերոց բնա ւին,
առանց լինելոյ՝ քաջ հետաքրն նին։
Սիրեա՛ զմարդիկ՝ առանց քո օգ տին,
թո՛ղ զսխալանս՝ քեզ յանցաւորին։
Լէր զգուշաւոր՝ և մանրաղբն նին,
յընտրել բարեկամ՝ միշտ քեզ մտերիմ։
Բարեկամութի՝ պահեա՛ ընդ լաւ լին,
սէր և քաղցրութի՝ ընդ ամենեսին։
Ներողամի՛տ լեր՝ քո բարեկա մին,
ընդ պակասութի՝ նորա մարդկային։
Մի՛ դատիցես զոք՝ ըստ պատուիրանին,
զի մի՛ և մարդիկ՝ զքեզ դատի ցին։
Մի՛ հետաքրքիր՝ լինիր օտա ին,
թէ որպէս արդեօք՝ կենցաղավարին։
Մի՛ պատմեր այլոց՝ զգործս քոյ լին,
որ ՚ի գովութի՝ անձին քո հայ լին։
Բարեշնորհութի՝ ՚ի վարձուց մասին,
ընտրութիւն տացես՝ արժանաւորին։
Ի բարեվիճակ՝ յաջողուած բաղ դին,
մի՛ երբեք լինիր՝ անձանաչ ան ձին։
Կարեկից ցաւոց՝ լեր տարաբաղ դին,

Նպաստամատոյց՝ կարօտ անան կին։
Յաղթեա՛ քաջութիւն՝ ձախող վիճակին,
մի՛ ընկճիր խսպառ՝ յարկածից չարին։
Լէր խաղաղասէր՝ հաճոյ բոլոր ին,
հաշտարար միջնորդ՝ 'ի մէջ ընկերին։
Ո՛ի ենդրեր վրէժ՝ քեզ ինաստ զին,
բայց թէ զբարիս՝ առնելով նը մին։
Յանդիմանեացես՝ զընկերդ առանձին,
սակայն քաղցրութիւն՝ և մի՛ խստագին։
Ո՛ի անգոսներ զոք՝ 'ի սրտի քոյ ին,
պատուեա՛ զմարդիկ՝ ըստ աստիճանին։
Ո՛ի տար 'ի դէմըս՝ զարարեալ բարին,
յիրաց քոց գաղտնեաց՝ թուեա՛ 'ի կարգին։
Ունանկ և կարօտ՝ քո բարեկամ մին,
առատաձեռնեա՛՝ ըստ կարեաց քոյին։
Սանձեա՛ զբարկութիւն՝ կիրքդ նորածին,
մի՛ տար բռնանալ՝ 'ի քեզ զայրագին։
Ո՛ի խօսիր զայլ ինչ՝ վասն օտար ին,
բայց եթէ զբարի՝ ել իւր պատշաճին։
Լէր երախտագէտ՝ քում բարերարին,
յապերախտութեաց՝ խորշելիր ուժգին։
Ցնծա՛ մինչ առնես՝ ումեք զբարի ին,
անշուայլաբար՝ շնորհեա՛ կարօտին։
Խորհեա՛ց ընդ երկար՝ նախ և առաջին,
և ապա խօսեա՛ց՝ ուր դէպք ինչ լինին։

Մի՛ շաղակրատեր՝ ըստ մնացեալ ծին,
սակաւ խօսեսջի՛ր՝ բանք քո յարգեսցին։
Մի՛շտ մեծ ինչ վարկջի՛ր՝ զձիր շնորհին,
որ յօժարամիտ՝ առ քեզ ընծային։
Ո՜գ՝ այշ լեր յաւէտ՝ 'ի կեանս քոյին,
մի՛ ումեք առնել՝ ինչաս բնաւ ուին։
Մի՛ տար նեղութի՝ քո պարտականին,
որոմ ստացուածդ՝ չինք ամենև ին։
Մի՛ թողուր անվարձ՝ վարձուց արժանին,
աննախանձ կամօք՝ հատո՛ լիս վին։
Լ՝եր դու ջանասէր՝ ուսի՛ր զկարե լին,
'ի հեղգութէ՝ փախի՛ր գլխոս վին։
Բաղաքավարեաց՝ օրինօք բա նին,
մի՛ լինիր անկիրթ՝ որպ վայրե նին։
Յարբեցութէ՝ խորշեսջի՛ր ինք նին,
մի՛ քեզ տիրեսցէ՝ կիրք ինչ մոլեգին։
Լ՝եր հայրենասէր՝ մինչ ցօր վախճանին,
ջանացօղ բարւոյ՝ սեպհական ազգին։
Թէ յաւելուն քեզ՝ յաջողուածք բազդին,
միշտ զգաստութի՝ վարեաց 'ի նոսին։
Ընդ յաջողութի՝ բարեաց օտա ին,
դու մի՛ 'ի նոսանձ՝ բերիր մահաձին։
Մի՛ զոք գովեսցես՝ բանիւք անչափին,
որ չէ արարեալ՝ բայց գործ ինչ ինչին։
Մի՛ ումեք յայտներ՝ զգաղտնիս քոյին,
և այր կատարեալ՝ լինիս դու նովին։

ՅԱՆԿ

ԳԼԽՈՑ։

	էջ։
Կանոն դպրատուն գացող մանկանց	12
Կանոն անկողնէն ելլալու	17
Կանոն քալելու	19
Կանոն նստելու կանգնելու	21
Կանոն կերակուր ուտելու	23
Կանոն կենցաղավարութիւն	30
Կանոն այցելութիւն երթալու	34
Կանոն հիվանդի այցելութիւն	37
Կանոն այցելութիւն եկողի	38
Կանոն ժողովի	40
Կանոն խօսակցութիւն	43
Կանոն շնորքով խօսելու	48
Կանոն ծնողաց հետ կենցաղավարութիւն	53
Կանոն թագաւորաց կամ իշխանաց հետ կենցաղավարութիւն	57
Կանոն հոգևոր հովուաց հետ կենցաղավարութեան	60
Կանոն քարոզութիւն լսելու	63
Կանոն վարժապետի հետ կենցաղավարութեան	65
Կանոն եղբօր հետ կենցաղավարութիւն	68

Կանոն բարեկամի հետ կենցաղավարութեան 70

Ուսումնասիրութիւն 77
Մ. Հնատասիրութիւն 80
Հմարտախօսութիւն 83
Խոնարհութիւն 85
Յամբերութիւն 89
Ինազանդութիւն 93
Խաղաղասիրութիւն 97
Պարկեշտութիւն 101
Նախանձաւորութիւն 105
Մ. Զգասիրութիւն 122

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏՈՒՆՊԱՄԵՆՏԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ